



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՍԽՀ Կուսակցության Ժողովրդական Կոմիտեի և
Սոցիալական Դատախառնության Գլխավոր Վարչություն

ԶԵՌՆԱՐԿՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

Խ. ՅԵՐԻՅՅԱՆ


ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՊՐԱԿ Ա.

ՄԵՐ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ՆՐԱ ԲԱՑԵՐԸ

Ձեռնարկ գյուղներն չեմ գյուղատնտեսական գաղտնիքի,
հաբաբուծական չեմ գյուղատնտեսական խմբակների
չեմ այլ կողեկեթիվների համար.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1928



ՀԱՅԿ ԼՈՍԱՎՈՐՈՒՄԻ ԱՊՈՎՈՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵՐԻ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ ԴՆԻՍՏՐԱԿՈՒՄԻ ՎԵՐԿՈՒՄԸ

ՋԵՌՆԱՐԿՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

Խ. ՅԵՐԻՑՅԱՆ


636

ԱՆԱՍՆԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

ՊՐԱԿ Ա.

ՄԵՐ ԱՆԱՍՆԱՊԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ԲԱՑԵՐԸ

Ջեռառկ գյուղերիս յե՛կ գյուղասնեռական դպրոցների
հորթաբուծական յե՛կ գյուղասնեռական խմբակների
յե՛կ ալ կողեկեթիվների համար...



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1928

Գրառեպլար № 832բ.

հ. 788

Տիրաժ 3000●

Պետհրատի 2-րդ տպարան Յերևանում.— Պատ. № 941

ԱՌԱՋԱԲԱՆ.

Ձեռնարկս կազմված է գյուղյերիտ դպրոցների առաջին խմբի ծրագրի համաձայն: Սրա նպատակն է ուժանդակել գյուղի անասնապահության ուսումնասիրությանը: Դրա համար առանձին ուշադրություն է դարձված անասնապահության գրությունը բնորոշող պայմանների ուսումնասիրության վրա և այն արդյունքների, վոր տալիս է մեր անասնապահությունը գոյություն ունեցող պայմաններում: Հաստնաբերելով բացերը՝ միաժամանակ դրժվում են այն ուղիները, վորոնցով պետք է ընթանա մեր անասնապահության հետագա զարգացումը՝ ռացիոնալացման և կոլեկտիվացման բնագավառներում:

Սույն աշխատությունը հանդիսանում է «Անասնապահություն» սերիայի առաջին պրակը: Յերկրորդը նվիրված է լինելու կենդանիների շենքերի կառուցմանը և պահվածքին, յերրորդը պրակն արդեն լույս է տեսել և պարունակում է հորթերի ռացիոնալ կերակրումն ու խնամքը: Հորրորդը նվիրված է լինելու կերաբանությանը և հինգերորդը պրակը՝ բուծման ռացիոնալ ձեերին:

Այնպես վոր սույն պրակի խնդիրները հիմնականում սահմանափակվում են տեղական անասնապահության պայմանների ուսումնասիրությանը:

Ձանաչել շրջապատը, հասկանալ ներկայիս գրությունը և անել առողջ և ճիշտ յեզրակացություն: Ուսումնասիրել տալ ներկան և նախապատրաստել ու տրամադրություն ստեղծել անցնելու ավելի կատարելագործված և ռացիոնալ ձեերին — այս է դրքիս հիմնական ձգտումը:

Ըստ ելության ձեռնարկի բաղկացած ե չերկու մասից՝ բացատրական և գործնական - հետազոտական: Առաջինը տրվում ե իբրև ներածություն կամ բանալի տվյալ նյութի վերամշակման համար, չերկրորդը (խնդիրներ և առաջադրություններ) իբրև նյութ խմբի գործնական-հետազոտական աշխատանքների համար: Յուրաքանչյուր գլուխ կազմված ե այդ չերկու իրար լրացնող մասերից: Յերկրորդ մասը խմբի աշխատանքի պատվանդանն ե կազմում:

Այդ բաժինը («Խնդիրներ և առաջադրություններ») կազմված ե այնպես, վոր խուժըը հնարավորություն ունենա՝

1. զարգացնելու իր գիտողունակությունը.

2. յուրացնելու գիտողության և հետազոտական աշխատանքների մեթոդիկան.

3. կատարելու հետազոտական աշխատանքներ (հաշվառումների, գիագրամմաների և տարբեր փորձերի միջոցով).

4. Ըմբռնելու և յուրացնելու ռացիոնալ ձևերի ելությունը և կիրառելու դրանց ելական մոմենտները կյանքի մեջ.

5. մասնակից անելու իր սովորածին գլուղի մասսային.

6. մշակելու խորհրդային մոտեցում անասնապահական զանազան խնդիրների, մասնավորապես նրա հեռանկարների նկատմամբ.

7. մոտիկից ծանոթանալու և ուսումնասիրելու իր գլուղի, շրջանի, գավառի և Հայաստանի անասնապահությունը, բուն զոտեխնիկական, տնտեսական և սոցիալական տեսակետներից:

«Խնդիրներ և առաջադրություններ» բաժնում արծարծված և վոշ մի հարց առանց լուծելու չպիտի մնա. դասավանդողի հիմնական անելիքը պիտի լինի այդ: Այդ ձևով միայն ձեռնարկը կծառայի իր նպատակին:

Հասկանալի չե, վոր աչս ձեռնարկում կարելի չեր գետեղել անասնապահության միայն հիմնական խնդիրները, Վորքան վոր աչդ խնդիրներն անմիջապէս ծագում են մեր իրականությունն ուսումնասիրելու ընթացքում:

Անասնապահական արդւունքներության մասին զիտավորելու կերպով չի տրվում և վոչ մի պատրաստի, պաշտոնական թիւ, ալլ գերադասվում ե, վորպեսզի աչդ թիւերը կազմեն խմբերն իրենք թե առանձին ընտանիքների, թե ամբողջ գյուղի, շրջանի, գավառի և թե վողջ Հայաստանի նկատմամբ՝ հիմնվելով գրքում բերած հիմնական տվյալների և սեփական հաշվառման վրա:

Այստեղ պարտքս եմ համարում շնորհակալութիւն հայտնել Ը. Ը. Տիգրան Մուշեղյանին և Նշան Մալաթյանին գրքուկը կազմելու ընթացքում ցուցց տված ընկերական աջակցության համար:

Խ. ՅԵՐԻԿՅԱՆ

Պետհամալսարան.

Ձ/Մ 28 թ. Յերեան

I. ԻՆՉԻ՝ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԻՆՉ ՏԵՍԱԿ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ ՊԱՀՈՒՄ ՄԵՐ ԳՅՈՒՂԱՑԻՔ.

Գյուղացիք զանազան նպատակների համար զանազան կենդանիներ են պահում: Այդ կենդանիներից մի քանիսը գյուղատնտեսութեան արտադրութեան և հում նյութերի վերամշակման մեջ վորոշ դեր են խաղում, մյուսները՝ վոչ: Որինակ, ձին, տավարը, եղը, ուղտը, գոմեշը կատարում են գյուղատնտեսական բազմատեսակ աշխատանքներ, մասնակցելով, այդպիսով, գյուղատնտեսութեան արդյունաբերութեանը, մյուս կողմից ել նույն կենդանիները վոչխարի, ալժի և խոզի հետ միասին վերամշակում են չերկրագործութեան ֆնացորդները, այսինքն խոտը, դարմանը և այլ հում նյութեր, դարձնելով միս, ճարպ, կաթ, բուրդ, եներգիւս (ուժ) և այլն: Վերը հիշած բոլոր կենդանիները կոչվում են գյուղատնտեսական կենդանիներ (մասնակցում են գյուղատնտեսութեան արտադրութեանը և վերամշակում են հում նյութեր): Այս տեսակետից պարզ է, վոր ընտանի թռչունները նույնպես գյուղատնտեսական կենդանիներ են հանդիսանում, քանի վոր սնվում են գյուղատնտեսական մթերքներով և արտադրում միս, ձու և փետուր:

Շունն ու կատուն գյուղատնտեսական կենդանիներ չեն կարող համարվել, այլ միայն ընտանի, միանգամայն հասկանալի հիման վրա:

Գյուղատնտեսական կենդանիներն իրենց տված ոգուտով համարժեք չեն մարդու համար: Նրանցից շատերը մարդուն տալիս են բազմակողմանի ոգուտ, մյուսները՝

միակողմանի: Որինակ, տավարն ու գոմեշը տալիս են կաթ, միս և աշխատանք, վոչխարն ու այծը՝ միս, կաթ, բուրդ և մազ, խոզը՝ միս ու ճարպ, հավը՝ միս, ձու, փետուր, եշը, ձին, ջորին և ուղար՝ միայն աշխատանք:

Բնական է, վոր մարդը ձգտում է պահել առաջին հերթին այնպիսի կենդանիներ, վորոնցից ավելի շատ ոգուտ կարող է ստանալ: Շատ անգամ ել նա միջանի տեսակ կենդանիներ է պահում, վորպեսզի բազմատեսակ մթերքներ ստանա և, ինչ չի տալիս մի կենդանին, կարողանա ստանալ մյուսներից: Որինակ, տավարի հետ պահում է և վոչխար, և ձի, վորպեսզի բուրդ ել ունենա, հեշտ ծախելու մանր ապրանք ել (վոչխար) և բացի դրանից հարմար փոխադրական միջոց (ձի):

Տեղական բնապատմական պայմանները (կլիման, հողը, կերի պայմանները, տոպոգրաֆիան և այլն) և շուկան խոշոր դեր են խաղում այս կամ այն կենդանուն ընտրելու և պահելու խնդրում: Որինակ, վորտեղ առատ արոտներ կան, ձեռնտու չե տավար պահել, գլխավորապես կաթ արտադրելու համար: Թաց, ճահճոտ տեղերը հարմար են գոմեշի և խոզի համար, իսկ տավարի և վոչխարի համար՝ վոչ: Վոչխարն ու այծը չոր տեղ և չոր կլիմա չեն սիրում: Շատ ցրտին գոմեշ²ի գլխանում, տավարն, ընդհակառակը, դիմանում է: Կտրտված լեռներում, ուր ճանապարհներ չկան, ավելի հարմար են եշերն ու ջորիները, քան ձին:

Մեծ շուկային մոտիկ շրջաններում առանձնապես ձեռնտու չե կով պահել, վորովհետև հնարավոր է կաթը թարմ վիճակում և ավելի թանկ ծախել: Յեթե շուկան մեծ քանակությամբ վոչխարի միս է սպառում, ուրեմն անհրաժեշտ է զարկ տալ շրջանի վոչխարաբուծությանը և այլն:

Այստեղ հիշած բոլոր պայմանների փոխադրեցությամբ է վորոշվում թե ինչ տեսակ կենդանի պետք է պահել տնտեսության մեջ:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ի՞նչ կենդանիներ են պահում ձեր գլուղում և ինչո՞ւ
ե պայմանավորվում զրանց քանակական տարրերու թվունը
մեզ մոտ:

(Թվեցեք լուրաքանչյուր տեսակի կենդանու համար
ձեզ մոտ գոյութուն ունեցող բոլոր նպաստավոր և ան-
նպաստ պայմանները: Այդ աննպաստ պայմաններից վո-
րո՞նք չենթակա յեն բարեփոխման և վորո՞նք վոչ):

2. Պարզեցեք, թե ձեր գլուղում մեծ մասամբ ինչ
տեսակի կենդանիներ են պահում՝ ունևորները, միջակ-
ները, չքավորները և բատրակները, և ինչո՞ւ եք այդ բ-
յութունը:

II. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՄԵՋԱՆՈՒՄ.

Կենդանիների արգլունավետութունը, նրանց տված
ողուսը չափվում է նրանով, թե վորքան են նրանք միս
տալիս, վորքան կաթ, բուրդ և ինչպիսի աշխատող են
հանդիսանում:

Շատերը զանգատվում են, վոր մեր կենդանիները
մանր են, վորքը կենդանի քաշ ունեն, քիչ կաթ են տա-
լիս, ուժ չունեն և այլն:

Այդ, իհարկե, առաջին հայացքից այդպես է յերևում:
Սակայն՝ ընդհանրապես կենդանիների մասին և մեր կեն-
դանիների մասին նույնպես չի կարելի կարծիք կազմել
միայն նրանով, ինչ վոր նրանք աչտոր կան, վորովհետև
կենդանիներն, ինչպես և մարդիկ, մեծ չափով շրջապատի
արգլունք են, և պարզ է, վոր ընկնելով վատ պայմանների
մեջ, չեն կարող զարգացնել իրենց լավ հատկութունները
և մնում են անարգլունավետ:

Դրանց շրջապատի կամ գոյության պայմանների հետ
ծանոթանալով միայն կարելի է պարզել և հասկանալ թե

խնչու չեն մեր կենդանւորներն աչգպես և խնչ ե հարկավոր անել, վոր նրանք ավելի արդշունավետ դառնան, այսինքն շատ կաթ և միս տան և ուժեղ կենդանիներ լինեն: Այդ նպատակով անհրաժեշտ ե նախ և առաջ վերլուծել մեր կենդանիների գոյության պայմանները:

1. ԿԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Սկսենք կենդանու ծնվելու որից: Մեր գլուղացիների ճնշող մեծամասնութլունն ամենևին չի մտածում կամ չի հասկանում, թե վորքան կաթ պիտի տալ նորածին հորթին, վոր սա ծնվելու որից բավարար չափով անունդ ստանա նորմալ կերպով աճելու և զարգանալու համար: Հորթին տալիս են 2 պտուկ և աչգպես շարունակում են մեկ ու կես ամիս: Կովը վատ կերակրվելով քիչ կաթ ե տալիս, այնպես վոր 2 պտուկից ստացվող կաթի բանակը մեկուկես լիտրից ավել չի լինում: Այդ կաթն առաջին 3—4 որվա համար գուցե և բավական ե, բայց այնուհետե ալիս չի կարող բավարարել հորթին, վորովհետե որեցոր մեծ անում ե, և դրա հետ միասին մեծանում ե նրա սննդի պահանջը: Այդ պատճառով այդպիսի սննդապակաս հորթերը միում են թուլլ, մանր և կանոնավոր կերպով չեն զարգանում:

Մեկ ու կես ամսից հետո, փոխանակ ավելի շատ կաթ տալու հորթին, ընդհակառակը, տալիս են միայն մեկ պտուկ, իսկ մի վորոշ ժամանակից հետո գրեթե ալիս կաթ չեն տալիս, թողնում են ծծի կթելուց հետո միայն, կարծելով, թե հորթն այնքան մեծացել ե, վոր կարող ե միայն խոտով և ալդ շնչին կաթով բավարարվել: Կաթի պակասեցումը վատ ե սզդում վոչ միայն հորթի աշխման, ալիս նրա հետագա զարգացման վրա:

Նույն պայմանները գոյութլուն ունեն և մլուս կենդանիների մատաղ սերնդի համար (գոմշաձագ, գառ, ուլ, գոճի, քուռակ և այլն): Դրանց մայրերը քիչ անունդ

ստանալով՝ քիչ ել կաթ են տալիս, վորը չի բավարարում՝
զավակներին նորմալ տճման և զարգացման համար:

Մատաղ հասակում քիչ կաթ ստանալով՝ մեր բոլոր
կենդանիները մնում են վտիտ և մանր:

Հետագայում ել չեն լավանում կերակրման պայման-
ները:

Մեր կենդանիներին սննդի ամենագլխավոր աղբյուրը
հանդիսանում է արոտը: Գլուղացին քիչ է մտածում
պատրաստված կերով ապահովել իր կենդանիների սնունդը
և իր հույսը դնում է գլխավորապես արոտի վրա: Իսկ
մեզ հայտնի յե, վոր նախ բոլոր արոտները միատեսակ
չեն և ապա՝ ամենալավ արոտն ել տևում է 2-3 ամսից
վոչ ավել: Արոտները չորանում են, վատանում, կենդա-
նիներն ալլես չեն կարողանում վորեւ պիտանի նյութ
արտադրել, հազիվ կարողանում են իրենց գոյութունը
պահպանել. իսկ աշնանից սկսած, նրանք ալլես բուրբուլի-
ն չեն կշտանում արոտից, քաղցած են մնում և որ-որի վրա
լղարում. ալսպիսով աշն միսն ու ճարպը, վոր հավաքել
են ամառվա արոտի ընթացքում, հետզհետե կորցնում են:

Գոմում կապած ժամանակ նրանք ստանում են մեծ
մասամբ դարման և լերբեմն ել խոտ, բայց բնդհանուր-
առմամբ այնքան քիչ են ստանում, վոր չի բավականաց-
նում իրենց գոյութունը պահելու համար, և կենդանիները
շարունակում են հյուծվել մինչև գարնան կանաչ արո-
տը:

Կերի ամենավատ ժամանակը ձմռան վերջն է և
գարնան սկիզբը, չերբ չոր կերը վերջանում է, իսկ կա-
նաչը դեռ վրա չի հասել:

Կերի պակասության պատճառով կենդանիներն ու-
ժասպառ են լինում, հաճախ կորցնում են իրենց քաշի-
ն ու չնիսկ 50 տոկոսը, դադարում են կաթ տալուց կամ չըն-
չին բանակուլթամբ կաթ են տալիս, վոչխարների բուրդը
թափվում է:

Բայց միայն դրանք չեն վատ կերակրելու հետեանք-
ները:

Հաճախ հորթերն ու գառները սատկած են ծնվում
կամ ծնվելուց 1—2 օր հետո սատկում են: Նույնը հա-
ճախ պատահում է և գառների հետ:

Այս ամենից պարզ է, թե ինչու մեր կենդանիները
կարողութունները չեա են մնացել: Գոյութուն ունեցող
պայմաններում դրանցից ավելին պահանջել չի կարելի:
Վոչ մի ոտար ցեղ մեր կենդանիների պայմաններում ապ-
րելիս չի կարողանա նրանցից ավելի արդյունավետ լինել:
Միայն ռացիոնալ կերակրման միջոցով հնարավոր է հալո-
նաբերել ու բարձրացնել այս կամ այն կենդանու արտա-
դրողականության չափը: Ուրեմն հարկավոր է ամենից ա-
ռաջ և առաջին հերթին մեր կենդանիների կերի պայման-
ները լավացնել: Միայն կերի և կերակրման պայմանները
լավացնելով կարելի է խմանալ, թե ինչ շնորհքի ու թազըն-
ված հատկութունների տեր են մեր կենդանիները: Պետք
է պարզել՝ զուցե մեր փորձված տոկուն և մեր պայման-
ներին հարմարված կենդանիները լավ կերակրման պայ-
մաններում ազնվացեղ կենդանիներից անգամ չեա չեն
մնում: Ձե՛ վոր ազնվացեղ կենդանիներն էլ կերի վատ
պայմաններում մերոնցից վոչ մի բանով լավ չեն լինում:
(Ռացիոնալ կերակրման մասին տես զլ. IV, 4, բ.):

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Քանի՞ ամիս են ձեր գուղում միայն արոտով սըն-
վում տավարը, գոմեշը, ձին, եշը, վոչխարը, այծը և խո-
զը, քանի՞ ամիս զոմում կապած, պատրաստի կերով և քա-
նի՞ ամիս՝ չերկուսով միաժամանակ:

2. Վճրքան դարման եք տալիս որական ձեր կենդա-
նիներին և վճրքան խոտ և ալլ կերեր: Բավարարում է ձեր
տված կերը ձեր կենդանիներին: Կազմեցեք համեմատա-

կան զիագրամժա փաստորեն տրվող և անհրաժեշտ կերի, արտահայտելով կերի քանակը կիրողրամներով:

3. Ձեր կենդանիներն արոտից կո՛ւշտ են վերադառնում տուն, թե՛ սոված: Ի՞նչ նշաններով եք իմանում, Վոր կենդանիները սոված են:

4. Հաշվեցե՛ք՝ վո՛րքան կաթ ե ծծում հորթը մորից (առաջին ամսումը), վո՛րքան կաթ կհասնի նրան նույն առաջին ամսումը, յեթե հորթին իր քաշի $\frac{1}{7}$ մասի չափ պիտի կաթ տար:

5. Ձեր կարծիքով ձեր կենդանիները (տավար, վոշխար) վո՛րքան միս են կուտակում ամառվա արոտներից և վո՛րքան են կորցնում ձմեռվա սովածությունից: Ձեր չեթաղրություններն ստուգեցե՛ք հետևյալ փորձով: Վորոշեցե՛ք ձեր կենդանիների կենդանի քաշը դարնան արոտի սկզբին, չեթկորոգ անգամ՝ ամառվա արոտի վերջը և յերրորդ անգամ՝ ձմեռնամտին:

2- ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Հայաստանը մեծ մասամբ լեռնոտ յերկիր ե, հարթավայրերը քիչ տեղ են բռնում: Մեր կենդանիների մեծ մասը տարածված ե լեռնային մասերում և դրա շնորհիվ նա մեծանում և զարգանում ե լեռներում:

Լեռնոտ պայմանները նպաստավոր կերպով ազդում են կենդանիների կազդուրման և զարդացման վրա շնորհիվ արեգակի ճառագայթների և ոգի նոսրության ազդեցությանը, իհարկե, կերի նորմալ պայմաններում: Դրանցից բացի տեղադրությունն ել մեծ ազդեցություն ունի: Սարերում ապրող կենդանիների մկանները, վոսկրները, վոտներն ու սմբակներն ամուր են լինում, վորովհետև սար բարձրանալիս և իջնելիս մանկությունից մարդվում են մարմնի այդ մասերը և շրջապատին հարմարվում: Նույնը պետք ե ասել թոքերի և սրտի մասին. լեռնային կենդանիների այդ որգաններն ավելի առողջ են և ուժեղ:


քան տափաստանների կենդանիներին: Դրանով եւ ե մասամբ բացատրվում այն յերևույթը, վոր լեռնալին կենդանիները հազվագյուտ դեպքերում են թոքախտով տառապում. համենայն դեպս վոչ այնքան շատ, վորքան տափաստանների կենդանիները:

Լեռնալին կենդանիներն ընտելացած լինելով լեռնալին պայմաններին՝ կարողանում են հեշտությամբ և արագորեն շարժվել լեռնալանջերում և լավ ոգտագործել սարերի արտաները:

Լեռնալին պայմաններն ազդում են նաև կենդանիների մարմնակազմի ընդհանուր ձևի վրա: Կենդանիների վրա մարդու կուլտուրան ավելի քիչ և ազդել, քան բնությունը, այդ պատճառով եւ ստացվել են բնական պայմաններին հարմարված կենդանիներ:

Լեռնալին պայմանները վորոշ հափով բնորոշում են և կենդանիների մեծությունը. մանր կենդանիներն ավելի հեշտ են հարմարվում լանջերին, քան խոշորները:


Մեր լեռները մեծ մասամբ քարքարոտ են, նույն վիճակում են գտնվում և ճանապարհները: Քարքարոտ տեղերում մեծացած կենդանիների սմբակներն առանձնապես ամուր են և դիմացկուն: Փափուկ գետնի վրա մեծացածները թույլ են և փխրուն: Պարզ եւ, վոր տափաստանի



Նկ. 1. Լիդանի չափափայտը, վորով չափում են կենդանիների բարձրությունը, լայնությունը, յերկարությունը և այլն. ցանկալի քե, վոր պեսզի յուրաքանչյուր դպրոց ձեռք բերի այդ փայտից:

նկ. 1. Լիդանի չափափայտը, վորով չափում են կենդանիների բարձրությունը, լայնությունը, յերկարությունը և այլն. ցանկալի քե, վոր պեսզի յուրաքանչյուր դպրոց ձեռք բերի այդ փայտից:

կենդանին լեռնային քարքարոտ գետնից ավելի չե առժուռ քան լեռնային կենդանին, թեև ընդհանրապես քարքարոտ գետինն ու արոտը չերկուսի համար ել վատ են: Կենդանիների սմբակները մնասվում են, վոտները վերքեր են ստանում, վորի հետևանքով կենդանիները կաղում են, ման գալ չեն կարողանում, արոտից լավ չեն ոգտվում, սոված են մնում: Շատ անգամ կենդանիներն ալդ քարքարոտ լեռների լանջերից ցած են գլորվում. դրան շատ հաճախ նպաստում են նաև անձրևներն ու յերկարատե չորությունը:



Նկ. 2. Ցույց է արվում թե ինչպես պետք է կովը կանգնած լինի, ինչպիսի տեղ և ինչպես պետք է չափել նրան չափափայտով:

Հարկավոր է արոտները և ճանապարհները քարերից մաքրել: Դրանից թե կենդանիներն իրենց հանգիստ կըզգան, և թե խոտի տեղը կլայնանա, և միևնույն տեղում ավելի մեծ թվով կենդանիներ կարելի կլինի արածացնել:

ԽՆԴԻՐՆԵՐ ՏԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ինչպիսի տեղերում են արածում ձեր գյուղի կենդանիները (Լեռնոտ-կտրտված վայրերում, հանգիստ-հարթավայրում, քարքարոտ քերծավոր տեղերում և այլն:)

2. Ձեր գլուղի վճիռ հանգերում են կենդանիներն իրենց ապահով և հանգիստ զգում (վայր ընկնելուց և քարերից վերքեր ստանալուց)։

3. Խոշոր կենդանիներն են ավելի հեշտությամբ շըրջում լանջերում, թե մանր։ (Բերեք որինակներ ձեր անձնական գիտողություններից)։

4. Տարբերվում է ձեր տավարն իր գիմացկունությամբ կամ միայն հատկությունով ձեր հարեան գլուղերի տավարից, և ի՞նչ բնական պայմաններով եք այդ բացատրում։

5. Ձեր գլուղի և սարի վճիռ ճանապարհներն են քարքարոտ, և վորոնցի՞ց են ավելի շատ տուժում կենդանիները։ Կազմակերպե՛ցեք շաբաթօրյակներ այդ ճանապարհները բարերից մաքրելու համար։

6. Կատարեցե՛ք հետևյալ փորձը։ Վերցրե՛ք մի շատ քարքարոտ հողաբաժին, արգելեցե՛ք այդ հողաբաժնում արացածնելը և ուղիղ կիսեցե՛ք։ Մի կեսը բոլորովին մաքրեցե՛ք քարերից, իսկ մյուս մասը թողե՛ք մնա իր նախկին վիճակում և ժամանակին հնձեցե՛ք յերկու մասնել առանձին և կշռեցե՛ք ստացված խոտն ու համեմատեցե՛ք չերկու բերքն ել իրար հետ։ Հետևանքի մասին զեկուցեցե՛ք գլուղի ընդհանուր ժողովում՝ ցույց տալու համար, թե քարերը վորքան վնաս են տալիս մեր տնտեսությանը։

7. Ի՞նչ ձև ունեցող կենդանիներն ավելի հարժար են լեռնային պայմաններին յերկար ու բարձր, թե կարճ ու ցածր կենդանիները։ Դրանցից վորն են պատկանում ձեր կենդանիները։ Ձեր կենդանիների վճիռ մասն է ավելի բարձր՝ յետևի թե առաջի։ (Ձափեցե՛ք յերկուսի բարձրությունն ել)։ Տես նկ. 1 և 2)։

8. Ո՞ւմ տավարն է սովորաբար ամենահանգիստ և փափուկ տեղերում ման գալիս ու արածում և ո՞ւմ՝ քարքարոտ և լանջոտ տեղերում։ Ի՞նչն է դրա պատճառը։

3. ԶՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.


Ո՞վ չի իմանում, վոր առանց ջրի կենդանին չի կարող ապրել: Այդ բոլորիս հայտնի չե: Բայց բոլոր կենդանիները ջրի միատեսակ պահանջ չունեն: Գոմեշը, խոզը, տավարը, ձին ավելի շատ ջուր են պահանջում, քան վոշխարն ու այծը: Աշխատող կենդանին ավելի շատ ջուր է պահանջում, քան պարապը: (Ինչո՞ւ): Չոր խոտ և ուժեղ կեր ուտողն ավելի շուտ է ծարավում, քան քաղցածն ու կանաչ խոտ ուտողը: (Ինչո՞ւ): Կաթ տվող կենդանին ավելի շատ ջուր է պահանջում, քան ցամաքը: Յեվ դա հասկանալի չե, վորովհետև կաթի 87% բաղկացած է ջրից: Բիշ ջուր խմող կենդանին շատ կաթ չի կարող տալ:

Այդ ե լինում շատ անգամ պատճառը, վոր ջրապակաս տեղերում կաթը պակասում է: Ջահեղներն իրենց քաշի հետ համեմատած ավելի շատ ջուր են պահանջում, քան մեծերը: Ջրի պակասությունից կենդանիները լսվել են աճում, մնում են մանր, և պակասում է դրանց արտադրությունը: Արջն և մսի մեծ ջուրը խոշոր տոկոս է կազմում, այնպես վոր կենդանին ջրի մեջ կարիք է զգում, և այդ պատճառով պետք է աշխատել, վոր կենդանիները ջրի պակասությունից չտառապեն և ծարավություն չունենան խմելու: Շոգ ժամանակ կենդանին ավելի շուտ է ծարավում, քան հով ժամանակ: (Ինչո՞ւ):

Մեր չերկրի շատ վայրեր ջրապակաս են և այդ պատճառով մեծ քանակությամբ արոտատեղեր գրեթե անոգտագործելի չեն մնացել:

Կենդանիների ջուրը պետք է առողջարար լինի և մաքուր:

Կանգնած ջրերը, ճահլճների և ճահճացած տեղերի ջրերը միանգամայն վտանգավոր են կենդանիների առողջության համար: Ամենալավը գետերի և աղբյուրների ջր-



րերն են, Ջրհորների ջուրը լավ է, յեթե կեղտոտված և նեխված չե: Անձրևաջուրը լավ է, յեթե նոր է տեղացել:

Ձմեռները շատ սառը ջուր չպետք է տալ կենդանիներին. կարող են մրսել և հիվանդանալ, իսկ ծանրած կոպերը կարող են հորթատել:

Սառը ջուրը սառցանելով կենդանու մարմինը՝ պահանջում է ավելորդ կեր՝ մարմինը տաքացնելու համար:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ձեր հանդերի և արոտների ջուրը բավարարում է ձեր կենդանիների պահանջներին, թե վոչ:

2. Ի՞նչ գետերից և աղբյուրներից կամ լճակներից են խմում ձեր կենդանիները տարվա տարբեր չեղանակներին:

3. Ջրհորներ ունե՞ք ձեր գյուղում, դուրսը թե գոմերի մեջ: Չի՞ նկատված, վոր գոմերի ջրհորների ջրերը փաստեն կենդանիներին (մանավանդ հորթերին և գոմշաձագերին):

4. Ձմեռները դուրսը, սառած գետերում կամ գյուղերում (լճակներում) ջրելու հետևանքով դողացնում են ձեր կենդանիները, դրանից վորո՞նք են ավելի շատ դողացնում, հազում են, կամ ջերմում են: Յեղե՞լ են հորթատելու գեպքեր, իբրև մրսելու հետևանք:

5. Ձեր գյուղի վո՞ր ջրերն են լավը համարվում, վորը վատ և ինչո՞ւ:

6. Կա՞ն ձեր գյուղում կարա-սու (սև ջուր) կոչված ջրեր, ինչո՞ւ յեն դրանց սև ջուր անվանում և ինչո՞վ են դրանք մյուս ջրերից տարբերվում: Ի՞նչ փաստ է տալիս կարա-սուն կենդանիներին (բերե՞ք ստուգված փաստեր):

7. Յեթե ձեր գյուղում աղբյուրներ և գետեր չկան կենդանիներին ջուր տալու համար և միակ ջուրը—գյուղերն են ու լճակները, ապա ի՞նչպես են ազդում այդ ջրերը կենդանիների առողջության վրա: Բերե՞ք ձեր դիտողություններից որինակներ (փորլուծ, փորուռուցք, վոչ-

խարհերի քչափանակը և այլն)։ Ի՞նչպես են ազդում այդ ջրերը կաթի և կաթնամթերքների վորակի վրա։ Վճր կեն-
(դանին և ավելի տուժում այդ ջրերից (տավարը, վոչխարը, ձին և այլն ու դրանց ջահելները)։

8. Նկատել եք, թե ինչպես և ազդում ջրի պակասութլունը կաթի բանակի վրա։

9. Ի՞նչ միջոցների լե դիմել ձեր գյուղխորհուրդը ձեր գյուղի ջրի պայմանները լավացնելու նպատակով աղբյուր և բերել գյուղը, առև անցկացրել, ջրելու տեղ շինել, ջրաճամպան և լավացրել և այլն)։ Ի՞նչ և ա-
յել նույն նպատակով սարհրում, արոտավայրերում։

10. Ձեր գյուղի ուն կենդանիներն են սովորաբար ջրի լավ պայմաններում գտնվում և ի՞նչն և դրա պատ-
ճառը։

11. Բանի՞ անգամ եք որական ջրում ձեր տավարը, ձին, վոչխարը և այլն. ինչո՞ւ։

4. ԽՆԱՄՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Կենդանիները լավ խնամքի մեծ կարիք ունեն, այն-
պես, ինչպես և մարդիկ։

Խնամքի առաջին պայմանը կենդանուն մաքուր պա-
հելն է։ Փոքր հասակից կենդանուն պետք է մաքուր վի-
ճակում պահել. մաքուր պահած կենդանին լավ է աճում ու զարգանում և առողջ է լինում։ Մաքուր պահած կովերն ավելի շատ կաթ են տալիս, քան կեղտոտ վիճա-
կում պահածները։ Մաքուր պահած ժարմնով մաշկային շնչառութլունն ավելի լավ է կատարվում, քան կեղտոտ, նյարդերը լավ են աշխատում, և կենդանին ավելի արդյու-
նավետ է դառնում։

Այդ պատճառով հարկավոր է բոլոր կենդանիներին մարմինը հաճախ մաքրել, թիմարել դաշավով և խոզա-
նակով (վոչխարից և այժից բացի) այնպես, ինչպես ձիու-

մարմինն են մաքրում: Տաք ժամանակ կարելի չէ ել լողացնել կամ լվանալ անխտիր բոլոր կենդանիները մարմնի կեղտոտ մասերը, նույնը կարելի չէ անել և հով ժամանակ, բայց հարկավոր և ցամաքեցնել, վոր կենդանին չմերսի:

Չմաքրելիս մաշկի վրա կուտակվում և կեղտը, վոր չին, կաշին վարակվում և զանազան հիվանդութիւններով, կենդանին վոջլտովում և, քոսոտովում, վորից շատ և տանջվում ու հլուծվում:

Վորպեսզի կենդանին մաքուր մնա, հարկավոր և մաքուր պահել և աչն տեղը, վորտեղ նա ապրում և (գոմը, արխաջը և այլն):

Կենդանուն հարկավոր և առատ լույս և մաքուր ոդ: Մեր գյուղում վոչ մեկը գոյութիւն ունի, վոչ ել մյուսը: Լույսն ու մաքուր ոդն առողջ են պահում կենդանուն, իսկ կովերը լույսի և մաքուր ոդի շնորհիվ միջերկու կիլոգրամ ավել կաթ են արտադրում:

Ոռոյր նշանակութիւն ունի մեղմ վերաբերմունքը կենդանիների համար: Կոպիտ վերաբերմունքն ու ծեծը շատ վատ են ազդում կենդանու վրա: Կենդանին վախկոտ և դառնում, կամքից զրկվում և անպետքանում: Ում չեն հաշտնի «թակած» և «աչքը վախեցած» ցուլը, յեզը և կովը: Կոմը զգալի չափով պակսեցնում և կաթը, յեզը ծուլութիւն և անում, չի աշխատում, իսկ ցուլն անպետքանում և, իբրև արտադրող:

Մեզ մոտ կենդանիները կեղտի մեջ կորած են. միայն ձիու մաշկն և, վոր մաքրվում և, մյուս կենդանիներին վոչվոք չի մաքրում: Գյուղացի չկա, վոր դազանակով չթակի իր կենդանիներին: Գոմ չկա, վոր ունենա, լույս մաքուր ոդ և չոր ու մաքուր հատակ: Սարերի արխաջների մասին ել չեմ խոսում: Ուրիշ խոսքով՝ մեզ մոտ խնամքի նկատմամբ ամեն ինչ պահանջի հակառակն և արվում:

Յեկ մենք զարմանում ենք, վոր մեր կենդանիները

քարձր արտագրության տեր չեն. ընդհակառակը, պետք է զարմանալ, վոր նրանք այսպիսի դաժան պայմաններում գեռ կարողանում են ապրել և պիտանի լինել տնտեսության համար:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ինչի՞ց եք իմանում, վոր կենդանուն գուր է զաւեա, չե՞րք նրա մարմինը մաքրում եք կամ քորում:

2. Ի՞նչն է պատճառը, վոր կենդանիները լիզում են փրար, քորում են իրենց մարմինը:

3. Ի՞նչ նշաններով են հասկացնում կենդանիներն իրար լիզելու համար:

4. Ինչո՞վ ե տարբերվում տավարի վոջիլը գոմեշի վոջիլից և ի՞նչպե՞ս եք վոչնչացնում դրանց: Քանի՞ տեսակ տիզեր գիտեք և դրանցից վորո՞նք վո՞ր կենդանու վրա չեն լինում: (Հավաքեցեք տիզերի և վոջիլների տեսակները տարբեր կենդանիների վրայից և նայեցեք խոշորացույցով ու նկարագրեցե՛ք):

5. Ձեզ համար որե՞նք դարձրեք և մաքրեցեք ամեն օր ձեր բոլոր կենդանիներին: Մազերի և վոտների վրա չորացած կեղան ու թրիքը լվացե՛ք ջրով:

6. Ձեր բոլորի՞դ գոմերի պատերի, իսկ չեթե անկարելի չե, առաստաղի մեջ բաց արեք լուսամուտներ և չեթե վարող եք, նաև ողանցքներ:

7. Կազմեցե՛ք պատգամներ կենդանիներին խնամելու մասին և բոլորդ ճշտութեամբ կատարեցե՛ք ձեր կազմած պատգամները ձեր կենդանիների նկատմամբ:

8. Չմոռանա՛ք պատգամների մեջ մտցնել գոմերի հատակներն ու արխաջները մաքուր պահելու նկատմամբ հատուկ կետեր:

9. Կթանների պտուկները կթելուց առաջ և հետո միշտ հարկավոր ե լվանալ:

10. Կազմակերպեցեք փոխադարձ հսկողութիւն յուրաքանչյուրիդ աշխատանքի նկատմամբ (կենդանիներին մաքուր պահելու խնդրում) և հետադոտման արդյունքների մասին գրեցեք պատի թերթում:

11. Բավական չե, վոր դուք չթափեք կենդանիներին. անհրաժեշտ ե, վոր աչդ բանում համոզեք և ձեր ծնողներին և հարազատներին:

12. Ղաշավի և խոզանակի չլինելը պատճառ չբերեք կենդանուն կեղտոտ պահելու համար, վորովհետև կենդանու մարմինը կարելի է մաքրել և ծղոտով ու շորով:

5. ԿԻՍԱ-ՔՈԶՎՈՐԱԿԱՆ ՅԵՎ ՆՍՏԱԿՅԱՑ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒՅՑՈՒՆ.

Հազվագյուտ դեպքերում մեր լերկրի կենդանիներն ամբողջ տարին ապրում են մի տեղ: Նրանց, սովորաբար, ձմեռները պահում են գյուղում, ամառները տանում սարը:

Յերբեմն, սար գնալու համար, Ադրբեջանի և Վրաստանի գյուղացիք 200—300 կիլոմետր տաքածութիւն են կտրում, կորցնելով ճանապարհին 10—15 ուր: Հաշաստանում գյուղացին ավելի կարճ ճանապարհներ ե անցնում: Այդ ճանապարհին կենդանին պանջվում ե, քաշը կորցնում և կաթը պակսեցնում: Սար բարձրանալուց հետո դեռ լերկար ժամանակ կենդանին չի կարողանում կազդուրվել, պակսած կաթը շատ դժվարութեամբ ե նորից բարձրանում: Հորթերը, գառներն ու վոշխարները ճանապարհին հոգնում են, ուժասպառ են լինում, շատերը չեն կարողանում ճամպա գնալ և ճանապարհին ընկնում են: Վորքան հեռվից ե գալիս կենդանին, այնքան ավելի վատ ե ազդում նրա առողջութեան և արդյունավետութեան վրա: անցած ճանապարհը:

Սարերում ցուրտ ե, խոնավ, անձրևներ և մառախուղներ հաճախ են լինում, նորածին ու մատղաշ անաս-

վոր հորթերն ու գառները, մանավանդ գոմեշի ձագերը մըսում են, մնում են թույլ, հաճախ հիվանդանում են և սատկում:

Սար բարձրանում են բոլոր գոտիներից ու տարբեր հեռավորութուններից: Միայն շատ բարձր տեղերում ապրող աղգաբնակիւթյունը չի տանում իր կենդանիներին սարը: Վորովհետև նա առանց այն ել հով տեղումն է գտնվում: Այգայիսի վայրերում շատ անգամ կթան տավարը մնում է գլուղում, ստերջը տարվում է սար:

Սարերին մոտիկ շրջանների կենդանիներն ավելի լավ են դիմանում սարի դաժան պայմաններին և ճանապարհ գնալուց այնքան չեն տուժում, վորքան արանի կենդանիները, վորովհետև նրանք սարերին մոտիկ ապրելով՝ ընտելացել են լեռնային պայմաններին:

Սար գնալն անհրաժեշտութուն է: Չի կարելի թողնել, վոր սարի արոտը մնա առանց ոգտադործության: Չե՞ վոր ամբողջ ամառը կենդանիները կարողանում են ապրել սարի արոտով, իսկ գլուղի արոտն ու պատրաստած կերը մնում են աշնան և ձմռան կարիքներին: Դրա շնորհիվ հնարավոր է լինում ավելի շատ կենդանիներ պահել:

Բայց, ինչպես քիչ վերևում տեսանք, սար գնալն ունի և իր պակասավոր կողմերը: Այդ պակասավոր կողմերը արանի (տաք շրջանի) համար ավելի շատ են, քան նախալեռնային և մանավանդ լեռնային գոտու համար:

Արանի աղգաբնակիւթյունը, քոչի շնորհիվ մեծ չափով զբաղվելով անասնապահությամբ, կամ չի զբաղվում թանգարժեք կուլտուրաների մշակությամբ կամ, չեթե զբաղվում է, ապա շատ սահմանափակ չափով և վերին աստիճանի պրիմիտիվ ձևերով: Այգիները, բաժբակը, բոստանը և այլ թանգարժեք մշակույթները մշտական հսկողութուն են պահանջում, և յերբ ընտանիքի մի մասը կամ բոլոր անդամները կենդանիներով միասին գնում են սարը, այդ կուլտուրաների նկատմամբ հսկողութունը պակա-

սում ե, և բերքը բիշ ե ստացվում: Ճիշտ ե, քոչվորը սարից 1—2 փութ յուղ ե բերում, և կենդանիները կազդուրված են վերադառնում տուն, բայց սար գնալու պատճառով դաշտում կորցնում են շատ անգամ ավելի բարիքներ:

Քոչի շնորհիվ վոչ միայն արանի յերկրագործությունն ե մնում եքստենսիվ վիճակում, անուցիոնալ, ապա ուրեմն և անարգյունավետ, այլ ավելի վատթար դրության մեջ ե մնում արանի անասնապահությունն ու կաթնատնտեսությունը: Քոչի գոյության պայմաններում անհնարին ե ազնվացնել կենդանիներին և ազնվացնել կենդանիներ պահել: Անհրաժեշտ ե նաև կատարելագործել և զարգացնել կաթնամթերքների արտադրությունը:

Քոչվորությունն արգելք ե հանդիսանում նաև լեռնային շրջանների անասնապահության և յերկրագործության զարգացմանը: Զբաղեցնելով մեծ քանակությամբ արոտատեղիներ՝ արանի քոչվորները, վոր մեծ մասամբ կուլակներ և ունևորներ են ու բիշ չափով միջակներ, սահմանափակում են լեռնային շրջանի անասնապահության զարգացումը: Լեռնային շրջանի բարեկեցության հիմքը կազմում են անասնապահությունն ու կաթնատնտեսությունը և վոչ թե յերկրագործությունն ու թանգարժեք կուլտուրաները, վորոնք այստեղ նպաստավոր պայմաններ չունեն:

Ուրեմն հարկավոր ե լեռնային արտոները հանձնել գլխավորապես լեռնային աղգաբնակությանը տեղական անասնապահությունը զարգացնելու և կատարելագործելու նպատակով, վորովհետև այդ շրջանի աղգաբնակությունն ապրուստի ուրիշ միջոց չունի:

Այստեղ, ուրեմն, ծագում ե տնտեսական շրջանացման հարցը, վորպիսի խնդրով զբաղված ե մեր պետությունը:

Վերացնելով քոչվորական անասնապահությունը՝ մենք կստեղծենք նստակյաց անասնապահություն թե լեռներում

և թե արանում, Յուդաքանչուր շրջանի անասնապահությունը կդարգանա տվյալ շրջանում արտագործող կերի քանակի համաձայն: Այդպիսով արանի անասնապահությունը կկրճատվի հոգուտ թանգարժեք կուլտուրաների ռացիոնալացման ու ինտենսիֆիկացիայի, իսկ լեռնային անասնապահությունը կուժեղանա ի հաշիվ նոր արոտավայրերի և անասնապահության ռացիոնալացման:

Սարերի արոտները պետք է ոգտագործեն աչն գյուղերը, վորոնք իրենց սարից գտնվում են միայն միջանի ժամվա հեռավորության վրա:

Քոչվորական անասնապահությունն արգելք է հանդիսանում և կաթնատնտեսական կոոպերացիայի զարգացմանը, վորովհետև այդ կոոպերացիան գոյություն կառող է ունենալ և զարգանալ միայն նստակյաց պայմաններում, վորովհետև կաթնամթերքների գործարաններն ու նկուղներն իրենց բարդ մեքենական կահավորումով անկարելի յե տեղափոխել գյուղից սար և սարից գյուղ և շրջանից շրջան, իսկ առանց դրանց, ինչպես հայտնի չե, վոչ ռացիոնալ կաթնատնտեսություն կարող է գոյություն ունենալ, վոչ ել կարող է զարգանալ կաթնատնտեսական կոոպերացիան:

Սարերի արոտների բարվոքման խնդիրը, նույնպես կապված է քոչվորության հետ: Հարկավոր է արոտների քարերը մաքրել, ճանապարհներ և կամուրջներ կառուցել, վատ բույսերը վոչնչացնել և փոխարենը ցանել լավորակ խոտերի սերմեր և վերջապես պարարտացնել: Բացի դրանից անհրաժեշտ է կանոնավորել և արոտների ոգտագործումը: Յեվ այս ամենը հնարավոր է միայն աչն դեպքում, չեթո յուրաքանչյուր արոտատեղ իր մշտական ոգտագործողը կունենա հանձին կաթնատնտեսական արտեղների և այլ կոլլեկտիվների, վորոնք այդ տեղերում կկազմակերպեն նստակյաց և մնալուն անասնապահություն և կաթնատնտեսություն, ալսինքն, ալսյան սնեսուրթուն:

Սակայն այս ամենը մեզ համար հեռանկարներ են միայն, վորոնց պետք է ձգտենք: Միանգամից վերացնել քոչվորութիւնն անկարելի է և նույնիսկ աննպատակահարմար: Քոչվորութեան վերացմանը և ալպան տնտեսութեան կազմակերպմանը պետք է անցնել աստիճանաբար:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Քանի՞ կիլոմետր է մինչև ձեր սարը և քանի՞ որում կամ ժամում եք հասնում այնտեղ:

2. Քանի՞ սար ունի ձեր գյուղը և ինչո՞վ են իրարից տարբերվում: (Բարձրութիւնը ծովի մակերևույթից, հեռավորութիւնը, ճանապարհները, լանջերի թեքութիւնը, բուսականութիւնը, ջուրը, քամիները, արոտի քարքարոտութիւնը, ճահիճները և այլն):

3. Քանի՞ ամիս եք մնում սարում:

4. Ձեր աւերո՞ղջ ընտանիքն է գնում սարը, թե ընտանիքի մի մասը:

5. Բոլոր կենդանիներին եք ուղարկում սարը, թե կովերին թողնում եք գյուղում, իսկ ստերջ կենդանիներին ուղարկում:

6. Սար տանելուց առաջ կշռեցե՞ք ձեր կովի կաթը և նույնը կատարեցե՞ք սարը հասնելու հետևյալ 2—3 որը՝ վորոշելու համար, թե ինչպե՞ս ե ազդել ճանապարհը կաթնատվութեան վրա:

7. Ձեր վո՞ր սարումն են կենդանիներն ավելի շատ կաթ տալիս: (Կազմակերպեցե՞ք յերկու տարբեր ուրթերում (որաներում) կաթի հաշվառում, այնպես, վոր յուրաքանչյուր կովատեր ամբողջ ամառ հափի իր կովերի կաթը և վերջը ձեզ հայտնի, թե ընդամենը վորքան կաթ է ստացել իր կովերից):

8. Ել ո՞վեր են գալիս ձեր սարը և ի՞նչ հեռավորութիւնից):

9. Քոչելու ժամանակ քոչվորներն ինչ փնտա են հասցնում տեղական բնակչութիւնը:

10. Վձր կենդանին ե ավելի շատ ոգուտ տալիս տիրոջը սարում արածելու հետևանքով (վոչխմրը, տավմրը—կթանը, ստերջը), (Հաշվեցեք թե կաթի քանակը և թե ավելացած մսի քաշը):

11. Քոչվորութիւն վերացման զեպքում ինչ ձևով կոգտագործելիք ձեր սարի արօտները. (այս հարցը դրեք ձեր խմբի քննութիւնը):

6. ԱՐՈՏԱՏԵՂԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՅԵՎ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ.

Արոտատեղերը յերեք կարգի յեն լինում. ամառային, ձմեռային և գլուղահանդեր կամ գլուղական արօտներ: Ամառային և ձմեռային արոտատեղերը պատկանում են պետութիւնը. վրն ազգաբնակչութիւնը տալիս ե կապալով՝ ոգտագործելու համար: Իսկ գլուղահանդերը գտնվում են գլուղական համայնքների տրամադրութիւն տակ: Ամառային արոտավայրերը կալ սարերն ոգտագործվում են սար գնացողների կողմից, իսկ ձմեռային արոտատեղերը՝ մեծ մասամբ արանի ազգաբնակչութիւն կողմից, թեև քիչ չեն լինում զեպքեր, յերբ լեռնային վոչխարապահներն իջնում են ցած և ձմեռներն այնտեղ են պահում իրենց վոչխարներին:

Մենք արդեն գիտենք, թե վորքան մեծ դեր ե խաղում արոտը մեր կենդանիների կյանքում: Վոչխարներն ու ալծերը գրեթե միայն արոտով են ապրում, մյուս կենդանիներն ել մոտ 7-8 ամիս: Սակայն յուրաքանչյուր արոտատեղ առավելագույն արդյունքը տալու համար պետք ե մի շարք պահանջների բավարարի.—

1. Արոտատեղը պետք ե մոտ լինի կենդանիների բնակարանին:

2. Հարմար լինի կենդանիներին ման գալու համար, շատ գիրթ, քարքարոտ և խորդուբորդ չլինի:

3. Լավ, սննդաբար և առատ բուսականութիւն ունենա:

4. Ջրով ապահով լինի:

Նայած թե ինչպես են արոտի այդ հատկութիւններն իրար հետ շաղկապված, դրանով վորոշվում ե, թե վոր տեսակին ե պատկանում տվյալ արոտատեղը: Մեզ մոտ արոտները սովորաբար 3 տեսակի չեն բաժանում:

Արոտատեղերը բարելավելու խնդրում շատ բան կախված ե մարդուց, բայց շատ բան մարդը փոխել չի կարող:

Մարդը կարող ե քարերը մաքրել, նոր բույսեր ցանել, պարարտացնել, շատ անգամ ջուր գտնել և անցկացնել, բայց նա չի կարող լանջերը հարթավայրերի վերածել կամ սարթութիւնը մեղմացնել և այլն:

Այդ բոլորից բացի մեծ նշանակութիւն ունի արոտավայրերի ոգտագործման ձևը: Դրանից շատ բան ե կախված:

Ամեն մի արոտատեղ հարկավոր ե միջանի մասի բաժանել և այդ մասերը հերթով արածացնել, բայց այն հաշվով, վոր մինչև մեկի վերջացնելը նախորդն արդեն նորից խոտակալի:

Դրանից բացի արոտները պետք ե կենդանիներին բաշխել ըստ նրանց կարիքների և ընդունակութիւնների:

Ամենալավ արոտները պետք ե տրամադրել կովերին և հորթերին, միջակ արոտները՝ մլուս խոշոր կենդանիներին, իսկ վոչխարներին ու այծերին կարելի յե տալ ամենահետ ընկած արոտները:

Թաց, ճլկոտ արոտները՝ գոմեշներին և խոզերին, իսկ չոր արոտները՝ վոչխարներին:

Բարձր տեղերը՝ վոչխարներին ու այծերին, ցած տեղերն ու հարթավայրերը՝ կովերին:

Մեզ մոտ յերբեմն այգպես ել անում են, բայց շատ անգամ ել անխնամ և անուացիոնալ են ոգտագործում արոտները:

Մեր արոտները չափազանց ծանրաբեռնված են և զբանից այնքան հյուծվել են, վոր շատ քիչ կենդանիներ են կարողանում կերակրել: Մեր ամառային արոտներում մոտավորապես մեկ հեկտարին ընկնում է միջին թվով 1,5 գլուխ խոշոր անասուն, թեև սրանք ել կանոնավոր չեն կշտանում, ամենաքիչը՝ 0,5 (կենինական) և առնա- առը՝ 2,8 գլուխ (Դիլիջան): Հանդերն ու ձմեռային արոտներն ավելի քիչ կենդանիներ են կարողանում պահել:

Ստորև բերում ենք Հայաստանի արոտավայրերի տա- րածությունը դեսիատիններով:

ՕՂԵՈՒՍԵԿ № 1.

ԱՐՈՏՆԵՐ ԴԵՏԻԱՏԻՆՆԵՐՈՎ

Գ ա ղ ա ն ե Ր	Ամառային	Զմեռային	Գլուղական (հանդեր)	Ընդամենը
Նոր—Բայազետ	103150	—	62612	165762
Դարալագյաղ	67000	—	105763	172763
Եջմիածին	24600	57000	86305	167905
Յերևան	47000	25410	134586	206996
Փամբակ-Լոռի	62232	—	60000	122232
Լենինական	64763	46000	110042	220805
Դիլիջան	64000	6000	40462	110462
Զանգեզուր	149626	—	67274	216900
Մեղրի	500	20000	16000	41000
Ընդամենը	587371	154410	683044	1424825

Հայաստանի ամառային արոտներից ոգտվում են և Ազրբեջանի ու Վրաստանի բնակիչները:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ունի՞ ձեր գյուղը ամառային, ձմեռային և գլու- ղական արոտներ. վորքան:

2. Քանի՞ խոշոր և մանր անասուն է ընկնում ձեզ րոտ մեկ դեսիատին կամ հեկտար ամառային, ձմեռային և

գյուղական արոտների վրա: Ճիշտ հաշվեցեք և կազմեցեք դիագրամմա:

3. Ձեր գյուղի վո՞ր արոտներն են համարվում ամենից արդյունարերը, ի՞նչ հիման վրա և վո՞ր կենդանու համար:

4. Ձեր գյուղի և սարերի վո՞ր արոտներն են համարվում I, II և III տեսակի և վո՞րքան եք վճարում յուրաքանչյուր տեսակի համար:

5. Ի՞նչպիսի տարիներում են շուտ փչանում արոտները:

6. Կշտանո՞ւմ են ձեր կենդանիները ձեր արոտներից, և յեթե՞ վո՞չ միշտ, ապա վո՞ր կենդանիներն են ավելի շատ տուժում արոտի պակասությունից թե սարում և թե գյուղում:

7. Պարզեցեք, թե ո՞վ և ոգտագործում ամենալավ արոտները ձեր սարում և գյուղում՝ ունևորները, միջակները թե չքավորները և ինչո՞վ և բացատրվում այդ:

8. Ի՞նչ բարելավում կարելի չե մտցնել ձեր արոտների ոգտագործման և բերքատվությունը բարձրացնելու խնդրում:

III. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

II. Բացարձակ փանակը.

ԱՂՅՈՒՍԱԿ № 2.

1926 թվին հայաստանում յեղել և բեգամեհը.

Տավար	—	718.000	գլուխ
Գոմեշ	—	56.000	»
Վոչխար	—	1.122.000	»
Ա,ծ	—	258.000	»
Խոզ	—	32.000	»
Զի	—	27.000	»

Առանձին կենդանիների բանակից կարելի չե չեղրակացնել, թե կենդանիների վո՞ր տեսակն և ավելի ձեռնաուժեք պաշմանների և կարիքների համար:

Այդ կենդանիները բաժանվում ելին գավառների վրա հետևյալ կերպով (առանց Յերևան և Լենինական քաղաքների).—

ԱՂՅՈՒՍՍԿ ԱՅ.

Գավառներ	Տափար	Գոմեշ	Վոչխար	Այծ	Խոզ	Զի
Յերևանի	73560	9020	118140	36410	1280	2030
Լենինականի	139660	3950	179890	53030	110	1810
Փամբ.-Լոռու	151060	11870	193960	18100	13960	9300
Դիլիջանի	74220	13440	111120	16190	12860	5690
Նոր-Բայազ.	104940	6150	150210	4750	183	1670
Զանգեզուրի	74410	2740	114300	23460	4270	4910
Եջմիածնի	63670	9470	147860	50170	—	370
Դարալագ.	30450	260	87040	16190	—	1560
Մեղրու	6840	—	20030	11340	—	360

Այս աղյուսակից չերևում է, վոր բացարձակ թվերով վերցրած, ամենատարաշատ գավառներն են՝ Փամբակ-Լոռին, Լենինականը և Նոր-Բայազետը։ Ամենավոչխարաշատ գավառները՝ Փամբակ-Լոռին և Լենինականը, միջին տեղն են բռնում՝ Նոր-Բայազետի, Եջմիածնի, Զանգեզուրի և Դիլիջանի գավառները։ Մյուս կենդանիների համեմատական դասավորումը գավառներում նույնպես պարզ չերևում է աղյուսակից։

Խոզը տարածված է համարյա միայն անտառաշատ գավառներում։ Դա պրիմիտիվ խոզաբուծութան հատկանիշն է՝ հենվել արոտի և անտառի պտուղների վրա։

Այծեջն աչքի չեն ընկնում այն վայրերում, վորոնք պատերազմի ընթացքում տնտեսապես քայքայվել են, կամ վորտեղ գաղթականությունն է տեղավորված (իզուր չե ասված, վոր այժն աղքատի կով է) կամ թե չե բնական պայմանները գլխավորապես այծի համար են նպաստավոր։

Բացարձակ լեռնային գավառները (Լենինական, Նոր-Բայազետ, Փամբակ-Լոռի) կենդանիներ շատ ունեն, կիսալեռնայինները (Զանգեզուր, Դիլիջան) միջակ քանակությամբ ունեն, նույնը և մեծ տարածությամբ արան-ունեցողները:

Կենդանիների քանակը կախում ունի այն կերից, վոր արտադրվում է տվյալ շրջանում, ուրեմն և ոգտագործ-վող հողի տարածությունից: Այդ պատճառով բացարձակ թվերը շատ քիչ բան են ասում. անհրաժեշտ է անասունների քանակը համեմատել ոգտագործվող տերրիտորիայի հետ, մյուս կողմից ել՝ անասնապահության զբաղվող ազգաբնակչության քանակի հետ: Ուրիշ խոսքով՝ անասնապահության ծավալի մասին ճիշտ գաղափար կազմելու համար անհրաժեշտ է վորոշել նրա խտությունը:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Առաջին ազդուսակի հիման վրա կազմեցեք գիտ-գրամմա Հայաստանի անասունների մասին:

2. Յերկրորդ ազդուսակից վերցրեք ձեր գավառի թվերը և կազմեցեք գիտագրամմա ձեր գավառի անասունների մասին:

3. Հաշվեցեք ձեր գյուղի կենդանիների թիվը և կազմեցեք գիտագրամմա բացարձակ թվերով:

Բ. Անասնապահության խտությունը.

Խտությունը վորոշելու համար վերցնում են կենդանիների թիվը և վորոշում, թե 100 շնչին կամ մի միավոր հողի պիտանի տարածությանը¹ վորքան կենդանի յեւնկում: Իբրև տարածության միավոր ընդունում են կամ

¹) Ըստ Կենսավիճվարի՝ պիտանի հողերի մեջ մտնում են վարելահողերը, անասնոցերը, խաղողի և պտղատու ծառերի այգիները և խոտհարքները: Պիտանի հողերի մեջ չեն մտնում բոլոր տեսակի արոտատեղերը (ամառային, ձմեռային, գյուղական հանդերը):

հեկտարը², կամ քառակուսի կիլոմետրը: Մենք այստեղ համեմատում ենք կիլոմետրի հետ և հաշվում ենք, թե մեկ քառակուսի կիլոմետրին վորքան կենդանի չե հասնում: Ստորև բերած աղյուսակները ցույց են տալիս այդ:

ԱՂՅՈՒՍԹՆ Ը 4.

1926 թվից ազգաբնակչության յուրաքանչյուր 100 շնչից բնկնում եր.

Գավառներ	Տավար	Գոմեշ	Վոշխար	Այծ	Խոզ	Էի
Յերևանի	66,3	8,1	106,5	32,8	1,2	1,8
Լենինականի	112,2	3,2	144,5	42,6	0,1	1,5
Փամբակ-Լոռու	113,5	8,9	145,1	13,6	10,5	7,0
Դիլիջանի	94,3	17,1	141,3	20,6	16,3	7,2
Նոր-Բայազետի	103,3	6,5	147,9	4,7	0,2	1,6
Զանգեզուրի	108,0	4,0	165,8	34,0	6,2	7,1
Եջմիածնի	55,6	8,3	129,1	43,8	—	0,3
Դարալագյազի	101,3	0,9	289,4	53,8	—	5,2
Մեղրու	84,0	—	246,2	139,3	—	4,4

Այս աղյուսակից (Ը 4) չեընում ե, վոր համեմատած ազգաբնակչության թվի հետ՝ ամենաշատ խտություն ցույց են տալիս տավարի նկատմամբ դարձյալ Փամբակ-Լոռու, Լենինականի և Նոր-Բայազետի գավառները, բայց սրանց թվին ավելանում են Զանգեզուրի ու Դարալագյազի գավառները, վորոնք իրենց բացարձակ թվերով շատ ցածր են կանգնած առաջին չերեք գավառների հետ համեմատած: Դարալագյազն ունի ընդամենը 30450 գլուխ տավար, սակայն 100 շնչին ընկնում ե 101,3 գլուխ: Այս կնշանա-

² Ավելի հարմար կլիներ, յեթե այդ համեմատությունը կատարվեր հեկտարի նկատմամբ, սակայն վորովհետև կենտրոնավոր քառակուսի կիլոմետրեր և հիմք ընդունել, ուստի մենք ել հարկադրված ենք նույնպես վարվել, չունենալով մեր հողերի տարածության վերաբերյալ պատրաստի և ստուգված հեկտարներ մեր տրամադրության տակ:

կի, վոր ազգաբնակութիւնը մեծ չափով զբաղվում է ա-
ն սան սպանությամբ: Ընդհանառակը, Եջմիածնի գավառի
տավարի բացարձակ թիվը 63670 է, սակայն 100 շնչին ընկե-
նում է մի սփն 55,6 գլուխ: Սրանից պարզ է, վոր Դարա-
լագյազն իր զբաղվածութեամբ ավելի անասնապահական է,
քան Եջմիածինը: Դարալագյազում ամեն մի շնչին մի
գլուխ տավար է ընկնում, Եջմիածնի գավառում յուրա-
քանչյուր յերկու շնչին մեկ տավար է ընկնում:

Բացարձակ թվերով ամենավեցարաշատ գավառնե-
րն են Փամբակ Լոռին, Լե լինականը, այնուհետև Նոր-
Բայազետի, Եջմիածնի, Յերեանի, Զանգեզուրի, Դիլիջանի,
Դարալագյազի և վերջը Մեղրու գավառները: Բայց յերբ
համեմատում ենք ազգաբնակութիւն թվի հետ, կարգը
փոխվում է: Առաջին տեղը բռնում են Դարալագյազը և
Մեղրին և ապա գալիս են — Զանգեզուրը, Նոր-Բայազետը
Փամբակ Լոռին, Լեւոնականը, Դիլիջանը, Եջմիածինը և
վերջը Յերեվանը:

Տավարը պահանջում է համեմատաբար ավելի առատ
ու լերկարատե արոտ, վորը գտնվում է բարձր շրջաննե-
րում և հնարավորութիւն է տալիս ավելի մեծ չափով
զբաղվելու տավարաբուծությա բն Փամբակ-Լոռին, Լեւոն-
ականը, Նոր-Բայազետը և Զանգեզուրի ու Դարալագյա-
զի խոշոր ժառը այդ տվյալներն ունեն, և այդ պատճառով
այդ գավառներում հնարավոր է լինում մեծ չափով տա-
վար պահել: Վորտեղ այդ պայմանները չկան, այնտեղ
տավարապահությամբ քիչ են զբաղվում:

Մեր ամեն մի գավառում գոյութիւն ունեն շրջան-
ներ, վորոք առավելապէս նպաստավոր են այս կամ այն
կենդանու համար, և մի շրջանի ազգաբնակութիւնը տվյալ
կենդանուց ավելի շատ է պահում, քան մյուս շրջանները
ազգ բնակութիւնը, և ստացվում է այն, վոր յերբեմն
միևնույն գավառում մեծ խտութիւն է ցույց տալիս միա-
ժամանակ յիջանի կենդանիների նկատմամբ: Որինակ՝ Դա-
րալագյազը, Զանգեզուրը, Փամբակ-Լոռին և այլն:

Բայց կան և գավառներ, վերոնք մի վորևե կենդանու համար առավելագույն նպաստավոր պայմաններ են առաջադրում, և ափսոսեալ է ինչպէս ինչ վարնում այդ կենդանու խտութիւնը, որինակ՝ վոչխարի նկատմամբ այդպիսի գավառներ հանդիսանում են՝ Դարալագյազը, Մեղրին, այծի նկատմամբ՝ Մեղրին։ Այդ գավառներում քարքարոտ և չոր արոտներ շատ կան և հնարավորութիւն են տալիս տավարի պակասը լրացնել վոչխարի և այծի քանակով (կաթ)։

Վերևում ասված է, վոր այս ընկան պայմանները քացի նշանակութիւն ունի և այն հանգամանքը, թե տըվչալ շրջանը վորքան է քաջքայված լեղել պատերազմի և զաղթի շնորհիվ (չե՞ վոր տնտեսութիւն վերականգնումն ավելի հեշտ է սկսել այժ ու վոչխար գնելով, քան տավար), և ասլա ընիկ և թե, յեկվոր տվյալ ժողովուրդը ու վերջը և այն, թե վորքան են նպաստավոր տվյալ կենդանու համար շուկայի պայմանները։

ԱՂՅՈՒՍԵՎ Ա 5

1926 թ. մեկ քառ. կիլոմետր տարածութեանը բնկնում եւ.

ԳԱՎԱՌՆԵՐ	Տավար	Դոմէշ	Վոչխար	Այծ	Ուղ	Զի
Յերեանի	70,4	8,64	113,1	34,8	1,2	1,9
Լենինակ.	93,9	2,65	121,0	35,6	1,07	1,2
Փամբ.-Լոռ	163,6	13,2	216,5	20,2	1,5	10,3
Դիջիջանի	160,2	29,0	239,9	34,9	27,7	12,2
Ն.-Բալազ.	123,9	7,2	177,4	5,6	0,2	1,9
Չանդեղ.	133,7	4,9	205,5	42,1	7,6	8,8
Եջմիածնի	92,7	13,7	215,3	73,0	—	0,53
Դարալագ.	152,7	1,3	436,7	81,2	—	7,8
Մեղրու	121,9	—	357,0	202,1	—	6,4

Յերբ անասունները քանակը համեմատուած ենք բնակչու-
թյան քանակի հետ, մենք մեր մանր տնտեսության պայ-
մաններում խտության հետ միաժամանակ կարողանում
ենք իմանալ, թե ազգաբնակչության մեծ տոկոսն է զբաղ-
վում անասնապահությամբ, թե վոքրո:

Բայց ազգաբնակչութունը պահում է իր կենդանի-
ներին վորոշ տերրիտորիայի վրա. վորքան մեծ է տվյալ գա-
վառի պիտանի ընդունված տերրիտորիան, այժման մեծ
հնարավորություններ կան այդ շրջանում կենդանիներ
պահելու:

Այդ պատճառով ել անհրաժեշտ է կենդանիների քա-
նակը համեմատել և պիտանի տերրիտորիայի հետ: ԱՅ
աղյուսակում բերված է կենդանիների խտությունը մեկ
քառ. կիլոմետր տարածության նկատմամբ:

Այդ աղյուսակից յերևում է, վոր տավարով ամենից
ծանրաբեռնված են հետևյալ գավառների տերրիտորիա-
ները՝ Փամփակ-Լոռին, Դիլիջանը, Դարալագյազը, այնու-
հետև գալիս են՝ Զանգեզուրը, Նոր-Բայազետը և Մեղրին.
վերջին տեղն են բռնում Նժդիաձնի, Լենինականի և Յե-
րևանի գավառները:

Թե բնակչության հետ համեմատելով և թե տերրի-
տորիայի, պարզվում է, վոր Յերևանի և Նժդիաձնի գա-
վառները տավարաբուծական չեն:

Վոյստրի նկատմամբ ամենածանրաբեռնված գավառ-
ները հետևյալներն են հանդիսանում՝ Դարալագյազը, Մեղ-
րին, Դիլիջանը, Փամփակ-Լոռին, Նժդիաձնի, Զանգեզու-
րը: Հետևյալ տեղն են բռնում Նոր-Բայազետը, Լենինա-
կանն ու Յերևանը:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. ԱՅ 4 և 5 աղյուսակների տվյալների հիման
վրա կազմեցեք ձեր գավառի անասունների խտության
դիագրամմա՝ համեմատելով ազգաբնակչության 100 շնչի
և մեկ քառ. կիլոմետր տարածության հետ:

2. Պարզեցնել ձեր դուրսի կենդանիների թիվը և վորոշեցնել, թե վորքան կենդանի չե ընկնում ազգաբնակչության 100 շնչին, և կազմեցնել դիագրամմա. (բնակչության թիվը վերցրել դուրսորդից)։

3. Նույնպիսի դիագրամմա կազմեցնել՝ համեմատելով ձեր հողերի (վարելահողեր, արոտատեղ, խոտհարք) տարածության հետ՝ արտահայտված վոյ թե կիլոմետրով, այլ հեկտարներով (վորքան կենդանի չե ընկնում մեկ կամ 100 հեկտարին)։

4. Ձեր դուրսի կենդանիներ պահող բոլոր դուրսացիներին բաժանեցնել ըստ տնտեսական կարողության չեբերեք մասի (ուռևոր, միջակ և չքավորներ) և հաշվեցնել, թե՝

ա) Յուրաքանչյուր խմբի 10 շնչին վորքան և ինչպիսի կենդանիներ են ընկնում։

բ) Յուրաքանչյուր խմբին պատկանել մեկ հեկտար պիտանի հողին (վարելահող, այգի, խոտհարք) վորքան և ինչպիսի կենդանի չե ընկնում։

Գ. Նախի կազմը.

Սակայն մեզ միայն կենդանիների ընդհանուր խտությունը չե, վոր հետաքրքրում ե։ Խտությունը քիչ բան ե ասում անասնապահության վորակի մասին. անասնապահության վորակի մասին զաղափար կազմելու համար հարկավոր ե իմանալ և նախրի կազմը։ Դա ցույց կա, թե վորքան արդյունաբեր ե անասնապահությունը։ Պարզ ե, թե վորքան մեծ տոկոս ե կազմում կթի կենդանին նախրի մեջ, այնքան ել նա արդյունաբեր ե համարվում և ընդհանրապես։ Որինակի համար վերցնենք տավարի նախիրը և ծանոթանանք նրա կազմին (տեղ աղյուսակ № 6)։

ԱՂՔՈՒՄՅԱԿ N 6.

1926 թ. հավաքի հախիքի յուրաքանչյուր 100 գլխից
բնկնում էր

ԳԱՂԱՌՆԵՐ	Բանող	Ցուլ	Կովեր	Հորթեր մինչ 1 տ.	Այլ
Յերեանի	31.6	0.9	28.2	22.0	17.3
Դարարագյազի	39.8	0.7	24.2	15.2	20.0
Դիլիջանի	31.1	0.3	27.3	18.1	23.2
Եջմիածնի	31.9	0.4	29.6	21.9	16.2
Ջանգեղուրի	29.9	1.0	27.4	20.1	21.2
Լենինականի	28.8	0.1	27.3	21.1	22.7
Մեղրու	34.0	2.8	27.4	17.0	18.8
Նոր-Բայազետի	28.7	0.3	26.4	19.5	25.1
Փամբ.-Լոռու	26.1	0.4	28.8	20.5	24.5

Այս աղյուսակից կարող ենք անել հետևյալ լեզրակա-
ցությունը.

1. Վոր Հայաստանի բոլոր գավառներում, բացառու-
թյամբ Փամբակ-Լոռու, լեզներն ավելի շատ են, քան կո-
վերը, այսինքն նույնիսկ լեռնային շրջաններում անաս-
նապահությունը գեոյերկրագործության կարիքներին է
ծառայում և վոչ հակառակը: Աննշան բացառություն կազ-
մում է Փամբակ-Լոռին, բայց այստեղ էլ կովերի քանակը
նախրի կազմի նույնիսկ 29⁰/₀-ին չի հասնում:

2. Վոչ մի գավառ չի կարող համարվել արդյունա-
բերական անասնապահական, վերոմհետև կովերի թիվը
ամեն տեղ էլ չնչին տոկոս է կազմում (26—27): Անաս-
նապահությունը գեոես մեզ մոտ տարվում է եքստենսիվ
և անարդյունավետ ձևով:

3. Կովերի քանակը ձգտում է, կարծես, ավելանալու Փամբակ-Լոռու և Յերևանի գավառներում շնորհիվ այն հանգամանքի, լեռերի, վոր Փամբակ-Լոռու վորոշ շրջաններում (Ստեփանավան և Վարանցովկա) կաթնատնտեսական արոներները, բնականաբար, առաջացնում են կովերի քանակի աճում. իսկ Յերևանի շրջակայքը (Հրազդան, Կոտայք և այլն) շահագրգռված լինելով թոր և կաթի վաճառումով Յերևանի շուկայում, պահում են գլխավոր պես կովերը։ Այս լեռերի գավառների ակնարկած շրջաններում կովերի քանակն ավելի, չե, քան ազդուսակում ցույց է տրված, և այդ կարողացել է ազդել սույն գավառների կովերի ընդհանուր տոկոսի վրա, թեև շատ չնչին չափով։

Արդյունավետ և անարդյունավետ անասնապահո թան տարբերությունն ավելի հասկանալու համար վերցնենք յերեք բնորոշ շրջաններ և համեմատենք. (Ստեփանավանի ու Վարանցովկայի շրջանները միասին, Ղամարլուն և Ապարանը) (աղյուսակներ № 7 և 8)։

ԱՂՅՈՒՍԱԿ № 7.

1926 թ. յուրաքանչյուր 100 շնից ընկնում էր

ԳԱՎԱՌԱԿՆԵՐ	Տավար	Գոմեշ	Բանող (յեղ ու գոմեշ)	Կթան կով ու մատակ	Վոշխար և այծ
Ստեփանավան, Վարանցովկայի	122.78	10 18	23.50	55 00	153.1
Ապարանի	91.0	4 21	24.20	21 90	242.30
Ղամարլունի	32.22	17.20	7.40	18.30	79.68

ԱՂՅՈՒՍԱԿ № 8.

1926 թ. մեկ բառ. կիլոմետր արածոքյանն ընկնում էր

ԳԱՎԱՌԱԿՆԵՐ	Տավար	Գոմեշ	Բանող (յեղ ու գոմեշ)	Կթան կով ու մատակ	Վոշխար և այծ
Ստեփանավան, Վարանցովկայի	118.00	9 80	22 60	52 50	123 8
Ապարանի	125,3	5 28	39.34	30 64	332.55
Ղամարլունի	86.40	46 00	19.84	49.10	213.64

Ստեփանավանի և Վարանցովկայի գավառակներում կենտրոնացած և կաթնարտելների զգալի մասը: Դրանք կաթնատնտեսություն ամենազարգացած շրջաններն են հանդիսանում մեզանում: Ազգաբնակչությունն աշխատում է վորջան կարելի չե շատ կթան պահել՝ կաթը գործարաններին մատակարարելու համար: Այդ և պատճառը, վոր ամբողջ նախրի 41,30% ը կթանն է կազմում, և ազգաբնակչության յերկու շնչին մեկ կթանն է ընկնում: Այնուամենայնիվ կարելի չե միայն ընդունել, վոր այս շրջանների անասնապահությունն արդեն բռնել է արդյունավետության ճանապարհը, քանի վոր անարդյունաբեր տարրերը նախրի մեջ տակավին մեծ տոկոս են կազմում (մոտ 60%):

Այս բացատրվում են րանով վոր ալդ շրջանների վոչ բոլոր գյուղերն ունեն կաթնարտելներ և ուրեմն կաթնատնտեսական թեքումը դեռ ամեն տեղ ուժեղ կերպով արտահայտված չէ:

Ապարանը նույնպես լեռնային շրջան է, բայց այնտեղ անասնապահությունը դեռ չի բռնել արդյունավետության ուղին: Տավարն այնտեղ պահվում է գլխավորապես լեզներ արտադրելու համար. յերիտասարդ կենդանիները, ամենաանարդյունավետը լինելով հանգերձ, կազմում են նախրի կեսից ավելին: Յուրաքանչյուր 5 շնչին ընկնում է մեկ կթան (Ստեփանավանում՝ 2 շնչին 1 կթան): Այդ տեսակետից Ապարանի անասնապահությունը կարելի չե համարել անարդյունավետության տիպար: Կովը կազմում է նախրի 23% միայն:

Ղամարլուն ինտենսիվ կուլտուրաների շրջան է (ալդի, բամբակ և այլն), և այնտեղ մեծ քանակությամբ տավար պահելն անհնարին է: Քոչվորությունն այնտեղ զբեթե վերացված է: Դրա պատճառով այնտեղ ընդհանրապես տավարը քիչ տեղ է բռնում, բայց բանող կենդանիների (7,40%) հետ համեմատած կովերը մեծ տոկոս են կազմում, (18,30%), 2,5 անգամ լավել: Յերևում է, վոր այստեղ

տավարը պահում են գլխավորապես կթան ստանալու համար: Ղամարլուի նախրի մոտ $60^{\circ}/_{0}$ -ը կազմում է կթանը. այդպիսի տոկոս չունեն նույնիսկ Ստեփանավանի և Վարանցովկայի նախիրները: Պարզ է, վոր Ղամարլուի նախիրն իր կազմով ավելի արդյունավետ է, քան նույնիսկ Ստեփանավանի և Վարանցովկայի նախիրները: Բայց Ղամարլուի անասնապահությունն ունի և իր բացասական կողմը:

Ղամարլվի շրջանը մեծ մասամբ յերիտասարդ կենդանիներին ծախում է և կովեր կամ մատակներ գնում: Յեթե բոլոր շրջաններն ել այսպես անեն, աչն ժամանակ կովեր պատրաստող չի մնա, և անասնապահությունը կը կրճատվի:

Աննորմալ է և Ապարանի շրջանի անասունների փոխհարաբերությունը նախրի մեջ: Ջահել տավարի թիվը չափազանց մեծ է: Անհրաժեշտ է այստեղ և նման բոլոր շրջաններում պահել մեծ քանակութամբ կովեր, մեծացնել մեծ մասամբ յերինջներ, եղ հորթեր, այն ել, իհարկե, լավագույն կովերից և վատերը խոտանել: Պետք է ձրգտել, վորպեսզի նախրի մեջ կովերի տոկոսը հասնի 60 -ի, իսկ մնացած $40^{\circ}/_{0}$ -ի մեջ ժողովեն անհրաժեշտ չեղները և այն բոլոր յերիտասարդները, վորոնցով ամեն տարի կփոխարինվեն պառավածները և այդպիսով կապահովվի կովերի $60^{\circ}/_{0}$ -ը նախրի մեջ:

Ստեփանավանի և Վարանցովկայի շրջաններն արդեն այդ փուլի մեջ են մտել և միքանի տարուց հետո կովերի թիվը կհասնի նախրի $60^{\circ}/_{0}$ -ին, և այսպիսով կովն իրեն վիճակված տեղը կըռնի արդյունավետ անասնապահության մեջ:

Իհարկե, արդյունավետ անասնապահությունը հնարավոր է միայն այնտեղ, վորտեղ կաթի խոշոր պահանջ կա, ուրեմն մեր առաջին խնդիրն այն է, վոր մեր յերկրի բոլոր գյուղերում կազմակերպենք կաթնատնտեսական արտերներ:

Համեմատելով այս շրջանները կենդանիների քանակը մեկ քառ. կիլոմետր տարածության հետ՝ տեսնում ենք, վոր իբր թե Ապարանի հողերն ավելի շատ կենդանիներ են պահում, քան Վարանցովկայի և Ստեփանավանի հողերը: Պետք է իմանալ, վոր այս հողերի մեջ չեն մտնում արոտատեղերը, վորոնց քանակն Ապարանում շատ է և հնարավորություն է տալիս մեծ չափով տավար ու վոջխար պահել:

Յերբ կենդանիների քանակը միայն վարելահողերի հետ ենք համեմատում, այն դեպքում դուրս է գալիս, վոր Ապարանում մի միավոր հողն ավելի շատ կենդանի յե պահում: Ապարանն ավելի վոջխարաբուծական է, քան Լոռու այդ յերկու շրջանները. այս նույնպես ցույց է տալիս, վոր Ապարանի անասնապահությունը եքստենսիվ է և պայմանավորված արոտների գոյությամբ:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Յուցակազրեցեք ձեր գյուղի տավարը, արձանագրելով առանձին-առանձին — կովերը, յեղները, ցլիկները և մողիներն ու մինչև մի տարեկան հասակի հորթերը և կազմեցեք ձեր գյուղի նախրի կազմի զիազրամման:

2. Ինչո՞վ եք բացատրում ձեր գյուղի նախրի ներկա կազմը. շարադրություն գրեցեք այդ մասին:

3. Ինչ միջոցների պետք է դիմել, վորպեսզի ձեր անասնապահությունն ընդունի արդյունավետ ուղղություն:

4. Կազմեցեք ձեր գավառի նախրակազմի զիազրամման № 6 աղյուսակի տվյալների հիման վրա:

5. Ինչպե՞ս հնախրի կազմը ձեր գյուղի անասնատեր ունեւորների, միջակների և չքավոթների մոտ: Վերցրեք գյուղի տարբեր խավերի 10—15 բնորոշ անասնություններ և հետազոտեցեք նրանց նախրի կազմը և աշխատեցեք կազմել զիազրամմա.

IV. ԱՆԱՍՆԱՊԱԿՈՒԹՅԱՆ ՏՎԱԾ ՈԳՈՒՏՆԵՐԸ.

I. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

ա. Բանող կենդանին ու շարժիչ մեքենան.

Առանց աշխատող կենդանիների գյուղացին շատ դժվար վիճակում կլիներ: Անասունները կենդանի շարժիչ ուժ են հանդիսանում. նրանք քարշում, շարժողութան մեջ են դնում գյուղատնտեսական գործիքները, մեքենաները յեվ այդպիսով աշխատեցնում են դրանց, քարշում են և սայլեր ու կառքեր, բայց շատ անգամ սայլերի ու կառքերի դերն ել են կատարում (բեռնակիրներ):

Մեծ ձգտում կա գյուղատնտեսութան մեջ ել կենդանիների շարժիչ ուժը փոխարինել մեքենայական շարժիչ ուժով, ինչպես այդ արդյունաբերութան մեջ ե, փորովհետև այդ ավելի ձեռնտու է, դրանով աշխատանքն ավելի արագ և արդյունավետ ե կատարվում:

Բայց մեքենայական ինքնաշարժիչները գյուղատնտեսութան ասպարիզում (տրակտոր, ավտոմոբիլ և այլն) արդյունավետ կերպով գործադրվելու համար պահանջում են վորոշ նպաստավոր պայմաններ:

Յերը այդ պայմանները բացակայում են, դժվարանում ե մեքենայական շարժիչների ներմուծումն ու գործադրումը գյուղատնտեսութան մեջ:

Մեզ մոտ մեքենական շարժիչների լաճն գործադրութան համար դեռ գոյութուն ունեն մի շարք աննպաստ պայմաններ, վորոնցից գլխավորներն են՝ մեր գյուղացիութան կուլտուրական հետամնացութունը և մեքենաների գործադրութանն անժանոթ լինելը, մեխանիկական գործարանների և արհեստանոցների բացակայութիւնը, մեր յերկրի լեռնոտ լինելը, հարմար ճանապարհների բացակայութիւնը, մշակվող հողի հաճախ անբարեկարգ դրու-

թյունը (քարոտություն և այլն) և վերջապես գյուղական տնտեսությունների մասնը լինելու:

Վերոհիշյալ աննպաստ պայմանների վերացումով և առաջին հերթին մասնը, անհատական տնտեսությունները խոշոր կալլեկտիվ տնտեսությունների վերածելով միայն հնարավոր կլինե՞ր մեքենական շարժիչ ուժի մասսայակա-նացումը մեր գյուղատնտեսության մեջ, իսկ մինչ այդ մեզանում բանող կենդանին կշարունակի գերակշիռ դեր խաղալիքը և շարժիչ ուժ: Կենդանիների արգլունավետ ոգտա-գործման չափը կախված է և նրանից, թե տարվա ընթաց-քում քանի որ նրանք աշխատում են և քանի որ պարապ մնում: Մեքենական ուժը կենդանի ուժի հետ համեմատելիս այս հանգամանքը նույնպես պետք է նկատի առնել:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ձեր շրջանի վճիռ գյուղերում կան տրակտորներ, և գյուղացիք զբաղվում են, թե ինչ:

2. Խնչ առավելություններ և պակասություններ ու-նի տրակտորի գումանի վարը յեղաքարշ գումանի վարի հետ համեմատած:

3. Քանի՞ կալլեկտիվ տնտեսություն կա ձեր շրջանում և զբաղվում քանի՞ տրակտոր ունեն:

4. Ձեր շրջանի (գյուղի) գյուղացիության կալլեկտի-վացման դեպքում հնարավոր է արդյոք տրակտորի գործա-ծության մասսայականացումը:

5. Հաշվեցե՛ք, տարեկան քանի՞ որ են աշխատում ձեր կենդանիները և քանի՞ որ պարապ մնում. նույնը և տրակտորի նկատմամբ: Կազմեցե՛ք այդ առթիվ դիագրամ-մա, ցույց տալով և պարապ որերի վնասը:

բ. Բանող կենդանիների ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆԵՅ ԱՎԻՏԱ-նիւրքյունը.

Մեզանում բանող կենդանիների շարքին են պատ-կանում գոմեշը, յեզը, ձին, եշը, ջորին և ուղտը: Տեղա-

կան ընակչութիւնը գոմեշին և յեղանն ոգտագործում ե լծելու միջոցով, իսկ մշուսներին՝ գլխավորապէս բառնալու կամ հեծնելու միջոցով:

Վորքան խոշոր ե կենդանին և ծանր, այնքան ել մեծ ե նրա ուժը: Պարզ ե, ուրեմն, վոր ամենից ուժեղը մեզանում գոմեշը պիտի լինի: Մեծ ծանրութիւններ տեղափոխելու կամ այդ ծանրութիւնները զժվար տեղերից դուրս հանելու համար գոմեշն ուղղակի անփոխարինելի չե:

Բայց նա ունի մի շարք պակասավոր կողմեր: Նա դանդաղաշարժ ե, ծուլ ե, չի դիմանում վոչ շոգին, վոչ ցրտին, շատ կեր ե պահանջում, հեշտութեամբ կեղտոտվում ե (ճահիճներից և ցխոտ տեղերից), վորի պատճառով հատուկ խնամքի կարիք ե զգում: Այդ պակասութիւնների շնորհիվ գոմեշը չի կարող համարվել ձեռնտու աշխատող կենդանի:

Համեմատած գոմեշի հետ, չեզն ավելի արագաշարժ ե, հեշտութեամբ դիմանում ե թե ցրտին, թե շոգին, աշխուժ ե և ավելի աշխատունակ, քան գոմեշը, հատուկ խնամքի կարիք չի զգում, տոկուն ե և ուժի կողմից այնքան ել յետ չի մնում գոմեշից, նրանից շատ չի տարբերվում: Պարզ ե, վոր գլուղատնտեսական աշխատանքների համար չեզն ավելի հարմար ե ու պիտանի, քան գոմեշը:

Թեև մեզ մոտ՝ գլուղում ձիուն ոգտագործում են մեծ մասամբ հեծնելու և բառնալու նպատակով և միայն մասնակի կերպով լծում են սայլերին և ֆուրգոններին (մեծ մասամբ ռուսական գլուղերում), բայց պետք ե գիտենալ, վոր գլուղատնտեսական բոլոր աշխատանքների համար ել ձին անփոխարինելի կենդանի յե: Նրա միջոցով աշխատանքն ավելի արագ ե կատարվում և ավելի արդյունավետ: Արտասահմանյան վորոշ փոքրերը ցույց են տվել, վոր 2 ձիու աշխատանքը մոտավորապէս հավասար ե 3 չեզան աշխատանքին, դուցե և ավելի:

Հասկանալի չե, վոր մանր ու թեթեւ ձիերն անհար-

մար են գլուղատնտեսական աշխատանքների համար, Ձրերը պետք ե լինեն խոշոր, համեմատաբար ծանր և միաժամանակ թեթևաշարժ: Շատ ծանր ձիերը նույնպես հարմար չեն գլուղատնտեսական աշխատանքների համար:

Պետք ե ամեն կերպ աշխատել յեղան աշխատանքը փոխարինել ձիու աշխատանքով:

Խոշոր ջորիներին և ուղտերին նույնպես կարելի յե ողտագործել գլուղատնտեսության մեջ, թեև նրանց աշխատանքի զլխավոր ասպարեզը բեռնակրությունն ե համարվում: Խոշոր ջորիներ մենք չունենք, իսկ ուղտերը շատ քիչ են և գործադրվում են միայն իբրև բեռնակիրներ: Իբրև ալդպիսիներ, ուղտն ու ջորին մրցակից չունեն. մանավանդ չոր ու քարքարոտ շրջաններում և այնպիսի տեղերում, վոլտեղ կերի մշտական պահասություն ե զգացվում: Իբրև բեռնակիր և զիմացկուն կենդանի, մանավանդ իբրև քիչ պահանջկոտ, եշը ջորուց յեա չի մնում:

Մեզ մոտ եշ և ջորի պահում են մեծ մասամբ լեռնային շրջաններում:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ձեր գլուղի բնական և կուլտուրական պայմանները վճիռ տեսակի բանող կենդանու համար են ավելի հարմար:

2. Ինչո՞ւ մեր գլուղացիք սովորաբար և մեծ մասամբ բանեցնելու համար աշխատում են պահել յեզը և վոչ թե մի այլ կենդանի:

3. Ի՞նչն ե պատճառը, վոր ձեր գլուղում ձիով վար չեն անում (կամ վաճի են անում):

4. Գրանցեցե՞ք ձեր գլուղի բոլոր տեսակի բանող կենդանիներին և կազմեցե՞ք զիսկրամբա:

գ. Բանող կենդանիների պահվածքի յեվ խնամքի պայմանները.

Ով ուզում է բանող կենդանիներից մեծ ոգուտ ստանալ, նա պետք է զբանց լավ կերակրի և խնամի:

Լավ կերակրել հարկավոր է մշնավանդ աշխատանքի ժամանակ: Խոտի հետ միասին հարկավոր է տալ և ուժեղ կերեր (քուսպ, ալյուր և ալն): Կենդանու ուժն առաջանում է կերից, և վորքան անդարար լինի կերը, այնքան էլ ուժը մեծ կլինի:

Ձմեռը, հանգստի օրերին կարելի է միայն խոտով և դարմանով կերակրել:

Պետք է այնքան կեր տալ, վոր կենդանին քաղցած չմնա, և քաշը հավակախ:

Տարբեր կենդանիներ տարբեր կերի պահանջ ունեն: Որինակ, դոմեշին ու չեղանը խոտ ու դարման է հարկավոր մափանը լցնելու համար. սրանց մարսողության գործաբանները հարմարվել են կոպիտ և մեծածավալ կերի և կարողանում են լավ մարտել այդ կերերը:

Զիռ ստամոքան, ընդհակառակը, հարմարված է փոքրածավալ ուժեղ կերերի, այդ պատճառով սրան անհրաժեշտ է առատորեն ուժեղ կեր տալ թե աշխատանքի ժամանակ և թե հանգստի օրերին, իհարկե առաջին դեպքում ավելի շատ, քան չերկրորդ դեպքում:

Կենդանու մարմնի մաքրությունը բարելավ ազդեցություն է թողնում նրա աշխուժության և աշխատունակության վրա, այդ պատճառով հարկավոր է բանող կենդանիների կաշին միշտ մաքուր պահել:

Բանող կենդանին պետք է միշտ պալտած (նալած) լինի, և այնպես պետք է պալտել, վոր մեխով չընկնի, վորովհետև դրանից շատ է տառապում կենդանին:

Սակայն լինչպես են պահում բանող կենդանիներին մեզ մոտ: Ճիշտ է, բանողներին, ընդհանրապես, ավելի

լավ են պահում, քան կթի և ստերջ կենդանիներին, բայց և այնպես դրանց խնամքն ել բավարար համարել չի կարելի:

Մեծ մասամբ դարձանով են կերակրում, խոտ հագվադուլտ դեպքերում են տալիս, իսկ ուժեղ կեր համարյա չեն տալիս:

Յեթե յերբեմն ձիուն չնչին քանակությամբ դարի յին տալիս, այդ դարին ել հաճախ չի մարսվում, վորովհետև շատ աեգամ ձիերն ազահությունից կամ աստմեները փչացած լինելու պատճառով դարին առանց ջարդելու (ծամելու) չեն կուլ տալիս: Այդպիսի դարուց ձին վոչ մի ոգուտ չի ստանում, իսկ դարին իզուր տեղը կորչում ե, չարկավոր ե դարին ջարդած տալ:

Մեր գլուղացին աշխատում ե արոտով կշտացնել նույնիսկ բանող կենդանիներին, բայց արոտը միշտ առատ չի լինում, այդ պատճառով կենդանիները կիսաքաղցած են մնում, հյուժվում են և դառնում աշխատանքի համար անպետք:

Գլուղացին կեր քիչ ե պատրաստում. ձմռան վերջը կերը համարյա ամբողջովին կերցրած ե լինում կենդանիներին, և գարնան ժամանակ չի ունենում այնքան կեր, վոր կարողանա կուշտ պահել և լավ աշխատեցնել դրանց:

Գարնանամտին կեր չունենալու պատճառով նա աշխատանքը դանդաղ ե կատարում. գլուղացին սպասում ե կանաչ խոտին. ուշացնում ե հողագործական աշխատանքները, իսկ մեզ հայտնի յե, վոր վորքան ուշ են կատարվում. գարնան աշխատանքներն, այնքան ել վատ բերք ե ստացվում: Գարնան կանաչն ել ուժ չունի, այնպես վոր անհրաժեշտ ե միշտ բավարար քանակությամբ պատրաստի կեր ունենալ:

Սոված և հյուժված կենդանիներից աշխատանք չի կարելի պահանջել: Այսպիսի կենդանիները միայն փնաս են տալիս անտեսությանը:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ի՞նչ կեր եք տալիս չեղանը, գոմեշին, ձիուն, հ-
շին: Վճր կենդանուն, վճր կերից ավելի շատ եք տալիս:

2. Բ՛լոր յեղներին ու գոմեշներին մի չափ կեր եք
տալիս, թե՛ խոշորներին շատ եք տալիս, մանրերին՝ քիչ:
(Կշռեցեք ամեն որվա տրվող կերը և ստուգեցեք):

3. Վճրքան և ինչպիսի կեր եք տալիս կենդանինե-
րին աշխատանքի և հանգստի ժամանակ: (Կշռեցեք աշխա-
տանքի և հանգստի ժամանակ տրվող կերը և համեմատե-
ցեք):

4. Վճր կերի և վճրքան պակասութուն եք զգում
գարնան աշխատանքի ժամանակ: (Հաշվեցեք կիլոգրամ-
ներով որական ահրածեղտ կե-ի քանակը, դուրս յեկեք
դրանից փաստորեն տրվող կերի քանակը, մնացորդը
(պակասը) կիլոգրամներով բազմապատկեցեք որերի
թվով):


5. Յճրը են ավելի լճար լինում ձեր բանող կենդա-
նիները՝ աշնանը թե՛ գարնանամտին: (Վորոշեցեք դրանց
կենդանի քաշը կամ կշռելով, կամ չափելով, առաջին ան-
գամ աշնան վերջը ու հետո գարնան սկզբին և համեմա-
տեցեք դրանց քաշերը):

6. Նկատել եք ձեր ձիու փթրի մեջ գարին վողջ հատիկ-
ներով: Ինթե այո, ապա ինչո՞վ եք բացատրում այդ յե-
րևույթը:

դ. Լծելու սարք.

Կենդանիների աշխատունակութունը մեծ չափով
կախված է լծելու սարքից: Մեր գյուղերում գործածվող
լուծերը շատ անհարմար են, կենդանիներն ուղղակի տանջ-
վում են դրանց ճնշման տակ: Ամբողջ ծանրութիւնն ընկ-
նում է ուսի վրա և դժվարացնում է աշխատանքը:

Այդ տեսակետից միքիչ ավելի լավ են մալականների լուծերը, սրանք ավելի կայուն են և վորոշ չափով թեթեւացնում են ուսի աշխատանքը:




Նկ. 3. Մեկ յեղան լուծ և լծելու ձեւը (ըստ վերների):

Ամենից լավը, սակայն, պետք է համարել ձիու լծելու սարքը, խամուտը, վորի միջոցով ճնշումը տարածվում է վոշ միայն ուսի վրա, այլև կրծքի առաջին ձախ և աջ մասերի վրա: Այդ հանգամանքն ավելացնում է կենդանու ուժը և բարձրացնում նրա աշխատունակութունը: Կենդանին իրեն ազատ է զգում և չի տառապում այնպես, ինչպես լծի տակ:

Արտասահմանյան փորձերը ցույց են տվել, վոր չեզնեւրին նույնպես կարելի է բանեցնել ձիու սարքով: Իհարկե, յեղան խամուտը վորոշ չափով տարբերվում է ձիու խա-

մուտից իր ձևով, վորովհետև չեզան մարմնի կազմվածքն




Նկ. 4. Մեկ չեզան լուծ և լծելու ձևը (ըստ եկեղարտի):

եղ իր ձևով տարբերվում է ձիու մարմնի կազմվածքից, Հասկանալի չէ, վոր չեզան խամուտը պետք է բաց լինի, և պետք է չեզան վզին նստեցվի վոչ թե գլխից հագցնելով, ալ ուսի վրա դնելով:

Խամուտի առավելություններն էլ մեկնել աշնե, վոր հնարավոր է լինում թեթև աշխատանքներին լծել միայն մի չեզը, ինչպես ձիուն են լծում:

Այն ինչ սովորեցնելուց է կախված. արտասահմանյան փորձերը ցույց են տալիս, վոր կարելի չէ չեզներին ել սովորեցնել աշխատել մենակ, ինչպես ձիուն: (Տես Նկ. 4, 5, 6):



Նկ. 5. Եզդերտի խամուտը չեզները լծելու համար:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ի՞նչ լուծերով են լծում ձեզ մոտ յեղներին և գոմեշներին, և ի՞նչ պակասություններ ունեն այդ լուծերը:

2. Պարտաստեցք յեղների խամուտի մոդիլներ և ապա խակական խամուտներ՝ գլուղում գտնվող վարպետների աջակցութեամբ:

3. Ձեր պատրաստած խամուտի պիտանիությունն ստուգելու համար լծեցեք յեղներին և աշխատեցրեք եքսպերտների (գնահատողների) ներկայութեամբ և խամուտի նկատմամբ պակասությունները վերացրեք:

2. ՄՍԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Մարդը սովորաբար սպառում է վոչխարի, տավարի, խոզի, այծի և գոմեշի միս: Բայց լինում են սովի տարիներ, յեր ձիու, եշի և այլ կենդանիների միսն էլ եղապառում: Մեզ մոտ մասցու կենդանիներ են համարվում տավարը, վոչխարը, խոզը, այծն ու գոմեշը:

Գոմեշի միսը կոշտ է և անհամ: Այծի միսը սովորաբար լղար է լինում և հատուկ համ ունի, վորը շատերին դուր չի գալիս: Ավելի շատ են գնահատում ու գործածում տավարի, վոչխարի և խոզի միսը:

Տարբեր կենդանիներ տարբեր քանակի միս են արտադրում տարվա ընթացքում: Մսի քանակը, վոր արտադրվում է կենդանու կողմից, կախված է կերից և կենդանու հատկությունից, կան կենդանիների տոանձին ցեղեր և անհատներ, վորոնց միսը շատ համով է, և վորոնք կարողանում են մեծ քանակությամբ միս կուտակել մարմնի մեջ:

Մասցուի հատկություն ունեցող կենդանիներն արտաբուստ էլ են տարբերվում մյուսներից: Նրանց կուրծքը լայն է և խորը լայն է և մեջքը, կողերը կլորած և մեծ ծավալ ունեցող, կարծես ամբողջ մարմինն այնպես

ե կազմված, վոր վրան շատ միս տեղավորվի: Այսպիսի կենդանիները հեշտությամբ են չաղանում և սովորաբար եզերը բիշ կաթ են տալիս: Այսպիսի չեղեր և առանձին կենդանիներ կարող են պատահել թե սավարի ու վոշխարի և թե խոզի մեջ: Սակայն ինչպիսի ցեղի չեղ պատկանելիս լիի կենդանին և վորքան ել միս կապելու հատկություն ունենա, միևնույն է, յեթե լավ կեր չստանա, վոշ շատ և վոշ ել լավ միս կկարողանա արտադրել:

Այդ պատճառով ել կենդանին պետք է առատ կեր ստանա, վորպեսզի կարողանա գերանալ կամ բավել:

Մեր չերկրի կենդանիների համար առատ կերի շրջանը զարնան և ամառվա արոտն է հանդիսանում, և հենց այն ժամանակաշրջանումն է (ապրիլ—հունիս), վոր կենդանիները միս են կապում, գերանում են: Սնացած ժամանակ երը (աշունը, ձմեռը և զարնան սկզբին) կենդանիներն աստիճանաբար լցարում են կերի անբավարար լինելու հետևանքով և ինչ ձեռք են բերել ամառվա ընթացքում հետզհետե կորցնում են և զարնանամտին այնքան հյուծված են լինում, վոր հաճախ պոչից վեր բաշելու զրության են հասնում:

Յեթե մեր կենդանիներն ամբողջ տարին լավ կերակրվելին, այն դեպքում նրանք կրկնակի քանակությամբ միս կկապելին, թե չե ինչ ոգուտ, յեթե ամառվա ստացածը ձմեռը պետք է կորցնեն և նորից կորցրածը լրացնեն ամառը, քանի վոր կարելի չեր ձեռք բերածի վրա նույնքան ել նորից ավելացնել, յեթե կերն ամբողջ տարին բավարար լիներ:

Սրանից դարձյալ այն յեզրակացությունն ենք հանում, վոր չի կարելի կենդանիներին արոտի հուսով թողնել, այլ հարկավոր է տանը պատրաստի կեր ունենալ ամբողջ տարին կենդանիներին կուշտ կերակրելու համար:

Մի ամառվա ընթացքում մի մսացու չեղը կարող է նույնիսկ 5—8 փութ միս կապել, մի ստերջ (ղսւլը) կովը՝

4—6 փութ և մի վոչխարը՝ $1\frac{1}{2}$ —2 փութ: Պատահել են գեպքեր, վոր ավելի շատ են կապել. դա կախված է կենդանիների հատկությունից, նրանց խոշորությունից, հասակից, արոտի վորակից և տեղի բարձրությունից: Շատ բարձր տեղերում կենդանիները լավ չեն չաղանում:

Մեզ մոտ, գյուղերում, սովորաբար շատ քիչ միս են սպառում, սպառվածն էլ մեծ մասամբ վոչխարի միս է: Տավար հազվադեպ տեղերում են մորթում: Միս սպառողները, գլխավորապես, քաղաքներն են և բանվորական շրջանները:

Հայաստանից մեծ քանակությամբ մսացու տավար և վոչխար ե արտահանվում գեպի Թիֆլիսի և Բագվի շուկաները:

Վերջին տարիներն սկսել են ավելի լայն չափով զբաղվել խոզաբուծությամբ, և դրա համար սկսել են բուծել անգլիական ցեղի սպիտակ խոզերին, վորոնք ըստ յերեվոնի շատ լավ արդյունք կտրող են տալ մեր պայմաններում:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱՐԴԻԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ձեր գյուղի կամ սարի վրա արոտներում վր կենդանիներն են ավելի լավ չաղանում, և ինչո՞վ եք այդ բացատրում:

2. Ինչպիսի փոփոխությունների յե յենթարկվում ձեր կենդանիների կենդանի բաշն ամբողջ տարվա ընթացքում և ինչն է փոփոխությունից պատճառը: (Վորոշեցեք ձեր կենդանիների կենդանի բաշը նախ՝ դարնան արժաի ըսկզբում, հետո՝ ամառվա արոտի վերջը և ապա՝ ձմեռվա վերջը և կազմեցեք քաշերի փոփոխությունների համեմատական գիագրամմա):

3. Վորոշեցեք, թե տարեկան միջին թվով (մոտավորապես) վրբան միս է սպառում ձեր ընտանիքը, ձեր գյուղը, ձեր շրջանը, ձեր դավառը (առանց գավառա-

կան քաղաքի) կամ վերջապես, Հայաստանի ամբողջ գյուղացիութիւնը: (Նախ վորոշում եր յուրաքանչյուր աշակերտի ընտանիքի սպառումը, ապա ի մի գումարում բոլորի ընտանիքների սպառումը և բաժանում ընտանիքների թվի վրա: Սրանով իմանում եք, թե միջին թվով մեկ ընտանիքը վերքան միս ե սպառում: Սրանից հետո ձեր գլուղի, շրջանի կամ գավառի տնտեսութիւնները քանակը բաղմապատկեցեք այդ միջին տվյալով, վորով իմանում եք, թե միջին թվով վորքան միս ե սպառում ձեր գլուղը, շրջանը, գավառը և Հայաստանի գյուղացիութիւնը: Հայաստանում կա մոտ 160.000 գլուղական տնտեսութիւն, իսկ գավառի և շրջանի մասին տեղեկութիւններ կարող եք ստանալ ձեր գլուղխորհրդի գրասենյակում): Կազմեցեք դիագրամա:

4. Մոտավորապես քանի՞ վոշխար, տավար և այլ կենդանի չե մորթվում ձեր գլուղում և վորքան մաքուր ուտելու միս ե կազմում այդ բոլորը (համեմատեցեք նախորդ առաջադրութիւն արգլուներին հետ):

5. Վորո՞նք են ձեր մսացուների շուկաները, ովքեր են գնում ձեր գլուղից մսացու կենդանիներ՝ մասնավոր չափառները, թե՞ սլետական կամ կոռպերատիվ վորեւե հիմնարկութիւն: Սրանցից վորո՞նք են ավելի շատ գնումներ կատարում և ավելի լավ գին տալիս:

6. Ի՞նչ արտաքին նշաններից կարող եք յեզրակացնել, վոր տվյալ կենդանին մսացուի հատկութիւններ ունի:

7. Վորոշեցեք, թե մաքուր միսը կենդանի քաշի վոր տոկոսն ե կազմում չաղ և լղար կենդանիների մեջ, (Հաշիվը կատարել մորթված կենդանիների նկատմամբ):

8. Հաշվեցեք՝ ի՞նչ գումարի միս ե սպառում ձեր գլուղը և ի՞նչ գումարի վաճառում գլուղս:

3. ԲՐԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Բուրդն ստացվում է վոչխարից, իսկ մազը՝ մյուս կենդանիներից (ալժ, գոմեշ, տավար և այլն):

Կան վոչխարի ցեղեր, վորոնք տալիս են փոքրիկ և նուրբ բուրդ, ինչպես և կան կոշտ բուրդ տվողներ:

Մեր վոչխարների բոլոր ցեղերը տալիս են կոշտ բուրդ, բաց ըրդի կոշտության աստիճանով նրանք իրարից տարբերվում են: Որինակ, բալբաս վոչխարի բուրդն ավելի փափուկ է, քան մազելս վոչխարի բուրդը: Բոգասի բուրդը սրանց միջին տեղն է բռնում:

Ախարքում ամենանուրբ բուրդ տվող վոչխարը համարվում է մերինոս ցեղը, վորից մեր պետությունը ձեռք է բերել միջանի տասնյակ գլուխ՝ փորձելու համար, թե կարո՞ղ են արդե՞ք նրանք դարձանալ մեր պլամաններում և մեր վոչխարների բուրդը լավացնել:

Մեր կոպիտ բրդերից նուրբ կսորենք չեն ստացվում, այլ ստացվում են միայն կոշտ-կոպիտ գարծվածքներ:

Մեր դյուղացիք բրդի մի մասն իրենք են մանում և իրենց համար զանազան կտորներ գործում, իսկ մյուս մասը ծախում են:

Աշխան բուրդն ավելի լավ է համարվում, քան գարնան բուրդը: Ձուան ցրտերը կոշտացնում են բրդի հատկությունը:

Շատ տեղերում վոչխարը չերկու անգամ են խուզում, շատ տեղերում ել միայն մեկ անգամ:

Լավ կերակրած ուլավ պահած վոչխարի բուրդը համարվում է ստացվում, համ ել վորակով լավն է լինում: Վատ պահած վոչխարից լավ բուրդ չի ստացվում:

Մեր վոչխարի բրդի հատկությունը կարելի չէ լավացնել, յեթե մենք հոտի միջից ընտրենք ամենանուրբ բուրդ ունեցող վոչխարներին, պահենք ու մեծացնենք նրանց դուռներին, ուրիշների հետ չխառնենք և շարունակ ընտ-

բուժյունն անհնճ միայն լավերից ու լավերը լավերի հետ խառնենք:

Բայց կարելի չե լավացնել և մերինոսի վոչխարի հետ խառնելով, թեև ալս դեպքում այն վտանգը կա, վոր մեր վոչխարը կարող ե կորցնել թե իր դմակը և թե կաթնատվությունը, քանի վոր մերինոսը դմակ չունի և կաթ քիչ ե տալիս:

Վոչխարի բրդի վրակը և ալլ հատկություններն աղնվացնելու համար անհրաժեշտ ե կազմակերպել վոչխարաբուծական ընկերություններ: Մասնավոր վոչխարատերերն այդ քանը չեն կարող անել, վորովհետև ուժ չունեն:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ի՞նչ ցեղի վոչխարներ են պահում ձեր գյուղում և զբանցից վճրն ե ավելի հարմար ձեր տեղական պայմանների համար:

2. Վճր ցեղի բրդից ի՞նչ իրեր են գործում ձեր գյուղում (գորգ, կապիւտ, շալ, գուլպա և ալլ կտորներ):

3. Քանի՞ կիլոգրամմ բուրդ եք ստանում տարեկան մի մեծ վոչխարից, զոչից (խոյից), թոխլուց: Վորոշեցեք միջին քանակը:

4. Քանի՞ կիլոգրամմ բուրդ ե արտադրվում ձեր գյուղում, ձեր գավառում և ամբողջ Հայաստանում (մի վոչխարից ստացված բրդի միջին քանակը բազմապատկեցեք ձեր գյուղի վոչխարի թվով, նույնը կատարեցեք գավառի և ամբողջ Հայաստանի վոչխարի քանակի նկատմամբ և կազմեցեք զիադրամմա):

5. Ձեր (ամբողջ աշակերտության) ստացած բրդի վո՞ր մասն եք ձեր կարիքների համար ուղտադործում և վճր մասն եք ծախում դուրս: (Սրա հիման վրա հաշվեցեք, թե վո՞րքան բուրդ ե գործադրում իր կարիքների համար գյուղացիությունը և վո՞րքան ծախում ե դուրս, և կազմեցեք զիադրամմա):

6. Ձեր վոյսարները վո՞ր ցեղի բուրզն ե ավելի թանգ վաճառվում և ինչո՞ւ:

7. Ո՞վքեր են ձեր գլուղից բուրդ գնում՝ մասնավոր մարդիկ, թե՞ կոոպերատիվ և պետական հիմնարկություններ:

8. Ի՞նչ գին են տալիս գնորդները աշնան, գարնան և լվացած ու անլվա բրդերին:

9. Ի՞նչ գումարի բուրդ ե գործադրում ձեր գլուղը իր կարիքների համար և ի՞նչ գումարի վաճառում դուրս:

10. Ձեր շրջանի վո՞ր գլուղում գոյություն ունի վոյսարարութեան ընկերություն և գո՞հ են արդյոք անդամներն ընկերության գործունեությունից:

11. Քանի՞ անգամ են ձեզ մոտ խուզում վոյսարը, այծը, և վո՞ր խուզի բուրդն ե ամենալավը համարվում:

4. ԿԱԹԻ ՅԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

ա. Կարն ու կարնամթերքներ.

Կենդանիների տված ոգուտի խոշոր տոկոսը կազմում ե կաթը, վորից պատրաստում են բազմատեսակ մթերքներ: Հայտնի և մեզ մոտ տարածված կաթնամթերքներն են՝ մածուներ, զանազան տեսակ պանիրները և կարագը: Յերկրորդական նշանակություն ունեցող մթերքներն են՝ արաժանը, շոռը, լոռը և այլն:

Կաթի և կաթնամթերքների մի մասը դյուղացին ինքն ե սպառում, մյուս մասը տանում ե շուկա: Ներկայումս մեզանում կաթնամթերքները յերկու ձևով են պատրաստում՝ հին նահապետական և գործարանային ռացիոնալ ձևով: Նահապետական ձևով պատրաստում են անհատ գլուղացիները, վորոնք վոչ լավ պատրաստելու ձևերը գիտեն և վոչ ել միջոցներ ունեն գրա համար: Ռացիոնալ ձևով պատրաստում են կաթնատնտեսական ընկերությունները, կաթնարտեիները, իրենց գործարաններում: Յեվ

պարզ ե, վոր սրանց կաթնամթերքներն ավելի լափն են ու թանգ գնով են ծախվում, քան նահապետական ձևով պատրաստվածները:

Շատ տեղերում կաթնամթերքներ չեն պատրաստում, ալլ վաճառում են թարմ կաթ, վորովհետև այս ավելի ձեռնառու յե համարվում: Որինակ՝ քաղաքներին մոտիկ գտնվող գյուղերի բնակչութունը կամ կաթը թարմ դրությամբ ե բերում քաղաք ծախելու, կամ թե մածուն դարձրած: Բայց շատ հաճախ գյուղացիք կեղծում են կաթը, այսինքն կաթի յերեսը քաշում են կամ սերզատում սեպարատորով, յերբեմն ել ջուր են ածում մեջը և այնպես տանում շուկա: Կեղծարարներին կառավարութունը հետապնդում ե և խիստ պատժում:

Կաթնարտելները հնարավորութուն ունեն թարմ կաթ մատակարարելու հեռավոր քաղաքներին: Որինակ՝ Փամբակ-Լոռուց թարմ կաթ ե ստացվում Յերևան և Թիֆլիս: Կաթը կաթնարտելներից հավաքում ե Պանիր Յուղ-Կենտրոնը ե ուղարկում ե այդ քաղաքները և ուրիշ տեղեր: Ստեփանավանի շրջանից ուղարկվող կաթը պաստերիզացիոն կաշանում չենթարկվում ե պաստերիզացիայի, վորպեսզի կաթը ճանապարհին չթթվի: Պանիր-Յուղ-Կենտրոնի կողմից վաճառվող կաթն անարատ ե և բարձր վորակի: Սա վաճառում ե միայն կովի կաթ:

Ամենաառողջարարը համարվում ե կովի կաթը, թեև վոչխարի և մանավանդ մատակի (եզ գոմեշի) կաթերն ավելի յուղալի յեն: Այծի կաթը (վորոշ չափով վոչխարինը և մատակինը նույնպես) ունի յուրահատուկ անդուրեկան համ ու հոտ: Այծի հում կաթի և պանրի միջոցով կարելի յե վարակվել մալուխան տենդ կոչվող հիվանդությամբ:

Ամենալավ յուղն ստացվում ե կովի կաթից. լավագույն և թանգարժեք պանիրներ ել են պատրաստում կովի կաթից: Պանիր պատրաստում են և վոչխարի ու այծի կաթից: Գոմեշի կաթից միայն յուղ են պատրաստում,

պանիր պատրաստում են միայն հազվագյուտ դեպքերում:

Մեղ մոտ պատրաստում են տեղական հասարակ պանիր, գործարաններում՝ թուշի (չանախ) և շվեյցարական պանիր:

Քաշած կաթից պատրաստում են հասարակ գյուղական պանիր, ջիլ պանիր և շոռ, թանից՝ չորթան կամ քամած թան: Լոռը պատրաստում են պանրի շիճուկից:

Թուշի պանրի քանակը հարյուր-հազարավոր կիլոգրամների չե հասնում և մեծ մասը վաճառվում է Հայաստանից դուրս: Շվեյցարական պանիր նույնպես արտադրվում է մեծ քանակությամբ և արտահանվում է միութենական կենտրոնական շուկաները:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Խնչպիսի կաթնամթերքներ են պատրաստում ձեր գյուղում և վճր կենդանու կաթից:

2. Տարեկան միջին թվով վճրքան կաթ, մածուն և յուղ ու պանիր եք սպառում ձեր ընտանիքում: (Սրա հիման վրա հաշվեցեք կաթի և կաթնամթերքների սպառման չափը ձեր գյուղում և ամբողջ Հայաստանում ու կազմեցեք դիագրամա):

3. Վաճառում ե արդյոք ձեր գյուղը դրսի շուկաներում թարմ կաթ և կաթնամթերքներ և մոտավորապես ի՞նչ քանակությամբ մեկ տարվա ընթացքում:

4. Կաթն անցկացրեք սերդատով և պատրաստեցեք կարագ, քաշած կաթից պատրաստեցեք ջիլ պանիր:

բ. Կաթի փափակ ավելացնելու յեվ կաթնամթերքների վորակը բարձրացնելու միջոցներ.

(Ցարական սեղեկուրյուններ ուցիոմալ կերակրման մասին):

Խնչպես մենք շատ անգամ առիթ ենք ունեցել տեսնելու, մեր կովերի քիչ կաթ տալու ամենագլխավոր պատճառն անուսացիոնալ կերակրումն է:

Ուրեմն կաթի քանակն ավելացնելու համար նախ և առաջ հարկավոր է կենդանիներին կերակրել կանոնավոր, ավելի ճիշտ՝ ռացիոնալ ձևով, այսինքն այնքան կեր տալ նրանց, վոր այդ կերը լիովին բավարարի կենդանու կենսական պահանջներին և հնարավորութիւն տա նրան առավելագոյն չափով դարդացնել ու բարձրացնել իր արտադրողական ընդունակութիւնները, բայց այնպես, վոր ավելորդ կեր չուտի և իզուր տեղը կերը չփչացնի։ Ուրիշ խոսքով՝ հարկավոր է կերը չափով տալ կենդանուն, նրա կենսական պահանջի և արտադրողական կարողութիւնները համեմատու վորքան ծանր է կենդանին, այնքան շատ կենսապահ կեր է պահանջում նա իր կյանքը պահելու համար, և վորքան շատ կաթ է տալիս նա, այնքան եւ շատ արդյունավետ կամ արտադրող կեր պետք է տալ, վոր կուրծի կաթնագեղձերը լիակատար կերպով կարողանան կաթ արտադրել։ Քիչ տալու դեպքում կերն իզուր տեղը կորչում է։

Ուրեմն, ամեն անգամ կենդանիներին պետք է կեր տալ նրանց կենդանի քաշի համեմատ, իսկ լեթե նրանք միաժամանակ և աճում են, կամ կաթ են տալիս, կամ ուզում ենք նրանց չաղացնել, պետք է այդ նպատակների համար եւ տունձին կեր տալ։

Ով ուզում է լավ արդյունք ստանալ իր կենդանուց, նա պետք է, ինչպես ասել ենք արդեն, բացի դարմանից և խոտից կերցնի նաև ավելի սննդաբար կերեր (ցորենի թեփ, քուֆալ (կոպտոն), դարու ալյուր, վարսակի ալյուր, ճակնդեղ և այլն)։ Այս կերերը հարկավոր է տալ առաջին հերթին կթաններին և աճող, չերիտասարդ կենդանիներին։ Նույնպես և վորձերին (ցուլերին) և գերի բերգալու ժամանակ։

Վորպեսզի կերը կարողանա բավարարել կենդանու բոլոր պահանջներին, հարկավոր է նախ կենդանու պահանջի չափը վորոշել և ապա կերի այն քանակը, վոր կբավարարի այդ պահանջներին։

Մենք փորձից գիտենք, վոր բոլոր կերերը հավասար սնունդ կամ ուժ չունեն, մեկը շատ սնունդ ունի, մյուսը քիչ: Գիտենք, որինակ, վոր խոտը դարմանից աննդարար է, և կենդանու պահանջը բավարարելու համար պետք է ավելի շատ դարման տալ, քան խոտ: Բայց վճրքան պետք է տանք մեկից և վճրքան մյուսից, կամ ի՞նչ կերպ պետք է մեկը մյուսով փոխարինենք, վոր կենդանու ստացած սնունդը փոփոխութեան չենթարկվի:

Դրա համար պետք է իմանանք, թե մի կգ. խոտը կամ դարմանը վորքան սնունդ են պարունակում: Իսկ սննդի քանակը վորոշելու համար պարզ է, վոր պետք է մի չափ ունենանք, սննդի չափ:

Դանիացիք սննդի քանակը վորոշելու համար իբրև չափ ընդունել են մեկ կգ. գարին: Ուրեմն մեկ կգ. գարին սննդի քանակը չափելու միավոր է հանդիսանում, ճիշտ այնպես, ինչպես մեարդ-լերիարութեան միավոր է համարվում, կգ.-ը՝ բաշի և այլն:

Ինչի՞ յե հավասար մեկ կգ. գարու սնունդը:

Դանիացիք փորձով գտել են, վոր մեկ կգ. գարու սնունդը կամ գարին մոտավորապես հավասար է 2,5 կգ. կաթին, այսինքն կոմի ուտելով 1 կգ. գարի, կարողանում է արտադրել 2,5 կգ. կաթ: Մյուս կողմից էլ մեկ կգ. գարին համարվում է կերի մի միավոր, ուրեմն կարող ենք ասել, վոր մեկ միավորն առաջացնում է 2,5 կգ. կաթ: Պարզ է այս բոլորից, վոր յեթե մի վորևեկ կեր ընդունակ է առաջացնելու մոտավորապես 2,5 կգ. կաթ, ուրեմն այդ կերը հավասար է նույնպես մեկ միավորի: Յե՛վ վորովհետև կերերը տարբեր աննդարժեք ունեն, ուստի մեկ միավոր կազմելու համար մեկից շատ պետք է վերցնել, մյուսից քիչ:

Այսպես, որինակ, դանիացիք և սկանդինավյան յերկրներում փորձերով իմացել են, վոր միջին թվով

1	կգ. ցորենը հավասար ե	կերի 1	միավորի (1 կգ. զարու)		
1	» աշորան	»	»	»	»
1	» վարսակը	»	»	»	»
0,95	» լեզխատացորենը»	»	»	»	»
1,20	» ցորենի թեփը	»	»	»	»
0,85	» բամբակի բուս.	»	»	»	»
0,90	» կոտավատի	»	»	»	»
9,10	» հակնդեղը	»	»	»	»
4,20	» կարտոֆիլը	»	»	»	»
3,0	» միջակ խոտը	»	»	»	»
4,00	» դարմանը	»	»	»	»

Դանիական և սկանդինավյան կերերը մեր տեղական կերերից, իհարկե, տարբերվում են, բայց վորովհետև մեր կերերն ուսումնասիրված չեն, հարկադրված ենք առաջնորդվել դրանցով: Դրանք մեզ համար թեև ունեն միայն մոտավոր և համեմատական արժեք, այնուամենայնիվ հնարավորություն են տալիս խոշոր չափով կատարելագործել մեզ մոտ ընդունված կերակրման ձևերը և դնել ուսցիոնայ հիմքերի վրա:

Յերբ մեզանում ել ուսումնասիրված կլինեն մեր տեղական կերերը, այն ժամանակ կարիք չի լինիլ ղեկավարվել դանիական տվյալներով:

Պահանջին համեմատ կեր տալու նպատակով պարզ ե, վոր մենք սկզբում պետք ե վորոշենք վոչ թե այս կամ այն կերի քանակը, այլ այն սննդի քանակը, վորին կարիք ունի կենդանին: Յեվ այդ սննդի քանակը պետք ե չափենք սննդաչափով, այսինքն կերի միավորներով: Ուրիշ խոսքով՝ պետք ե վորոշենք, թե վորքան միավոր ե հարկավոր կենդանուն իբրև կենսապահ կեր և վորքան միավոր՝ իբրև արդյունավետ՝ Ըստ դանիական նորմաների մինչև 350 կգ. կենդանի քաշ ունեցող կենդանուն (տավար) հարկավոր ե տալ միջին թվով որական 3,0 միավոր իբրև կենսապահ կեր:

350—449	կգ.	քաշ	ունեցողին՝	3,5	միավոր
450—549	»	»	»	4,0	»
550—649	»	»	»	4,5	»
650-ից բարձր	»	»	«	5,0	»

Իսկ արդյունավետ կերի համար տրվում է միջին թվով մեկ միավոր կեր 2,5 կգ. կաթի գրամաց:

Այս ամենն իմանալով, հարկավոր է միայն վորոշել կովի կենդանի քաշը և չափել կաթի քանակն ու կազմել դրանց հիման վրա ռացիոն:

Իներենք ռացիոն կազմելու հետևյալ որինակը:

Յենթագրենք՝ ունենք մի կով, վորի կենդանի քաշը հավասար է 300 կգ. և որական 6 կգ. կաթ է տալիս: Վորոշում ենք, թե քանի միավոր է հարկավոր կենսապահ կերի համար: Մենք արդեն գիտենք, վոր 300 կգ. կենդանի քաշին հարկավոր է 3,0 միավոր: Մնում է արտադրող կերը: Յենթե չուրաքանչյուր 2,5 կգ. կաթի համար հարկավոր է մեկ միավոր, ապա 6 կգ. կաթը կպահանջի 6: $2,5 = 2,4$ միավոր: Ուրեմն այդ կովին պետք է տալ 3 միավոր կենսապահ և 2,4 միավոր արտադրող կեր, ընդամենը 5,4 միավոր կեր:

Մենք գիտենք, վոր կենսապահ կերի համար պետք է տալ կոպիտ կեր, այսինքն խոտ և դարման, իսկ արտադրող կերի համար՝ ուժեղ կեր — քուսպ, թեփ և այլն:

Յենթագրենք՝ մենք ունենք խոտ, դարման և բամբակի քուսպ: Այդ դեպքում կենսապահ կերի 3 միավորը կազմում ենք խոտից ու դարմանից: Դրանցից վորն ավելի շատ է տնտեսություն մեջ, նրանից ավելի յենք տալիս: Յենթագրենք՝ չերկուսից ել հավասար քանակությամբ ունենք տնտեսություն մեջ. այս դեպքում կեսը կարող ենք տալ մեկից, կեսը՝ մյուսից: Մեկ միավորի մեջ մըտնում է 3 կգ. խոտ, իսկ մեկ ու կես միավորի՝ 4,5 կգ. խոտ: Նույն ձևով իմանում ենք, վոր 1,5 միավորի դիմաց պետք է տալ 6 կգ. դարման:

Մնում է վորոշել քուսպի քանակը կաթ ստանալու համար:

Արտադրող կեր պահանջվում է ընդամենը 2,4 միավոր կամ կլորացրած՝ 2,5 միավոր: Մեկ միավորը հա-

վասար ե 0,85 կգ. քուսպի, իսկ 2,5 միավորը 2,1 կգ. քուսպի: Ուրեմն կովը պետք ե ստանա 2,1 կգ. (2 կգ. 100 գրամմ) քուսպ, վոր կարողանա արտադրել 6 կգ. կաթ:

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր մեր որինակ բերած կովը պետք ե ստանա որական.

խոտ — 4,5 կգ.

դարման — 6 կգ.

քուսպ — 2,1 կգ.

Յեթե ճակնգեղ կամ մի ավելի կեր ել ունենք, կարելի լի գարմանի ե խոտի միծ մասը դրանով փոխարինել: Վորքան բազմազան ե կերը, այնքան ել արդյունավետ ե նա: Պետք ե աշխատել, վոր կուլիտ կերի ընդհանուր քանակը շատ չլինի, բայց 5 — 6 կգ.-ից ել պակաս չլինի որական մեկ հասակավոր կենդանու համար:

Այս գլխում ցույց տրված ձևով կերակրողն իր կովից շատ կաթ կստանա:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Վորեշեցեք ձեր կենդանիների (տավարի) կենդանի բաշերը (զրբի վերջում ցույց տրված ձևով), ապա կթանների տված կաթի քանակը ե բոլորի համար կազմեցեք ռացիոն ե ռացիոնով կերակրեցեք նրանց:

Չպիտի մոռանալ, վոր ա) կերը պետք ե տալ որական 2-3 անգամ ճիշտ վորոշված ժամերին. բ) կեր տալու մեջ ել պետք ե վորոշ կարգ սահմանել ե չխախտել այդ կարգը (որինակ. առաջուց կսրելի լի տալ ուժեղ կերեր, հետո արմատապատուղներ ե վերջը կուլիտ կեր կամ ընդհակառակը). գ) վորքան բազմատեսակ լինեն կերերը, այնքան ել մեծ արդյունք կտան նրանք. դ) ամբողջ որվա ռացիոնը պետք ե բաժանել այնքան հավասար մասերի, վորքան անգամ կեր եք տալիս, ե լուրաքանչյուր մասը

տալ համապատասխան ժամերին. *ե)* կերը պետք է տա քիչ-քիչ և մինչև վոր կենդանին սկզբի տվածը հուտի, չպիտի նոր կեր տալ. *զ)* կերը պետք է լինի առողջ, աչսինքն չբորբոսնած, չսառած, չնեխված և անպայման մաքուր. *է)* կրճոնքը (թերմացքը) պետք է մաքուր հավաքել և ածել կենդանիները տակ:

2. Ո՞վ է ձեր գլուղում ամենից լավ կերակրում իր տավարին: Ինչո՞վ եք այդ բացատրում (ուճե՞ծ եք, կեր չափ ուճե՞ի, թե՞ զխտակից և որինակելի անասնապահ է):

Ռացիոնալ կաթնասնեստուրյան նախապայմաններ.

Սակայն բավական չե՞ շատ կաթ ստանալ, անհրաժեշտ է կաթի մշակման լավագույն ձևերն իմանալ և պատրաստել լավ կաթնամթերքներ, վորպեսզի կարելի լինի լավ գնով վաճառել:

Գլուղացին այդ ձևերը չգիտե, և լավ կաթնամթերքներ պատրաստելը մի մարդու ուժից վեր է, վորովհետև բացի գիտությունից, վոր մեր գլուղացին չունի, հարկավոր է ունենալ և հարմարություններ, մաքուր, հարմար շենք, մի շարք գործիքներ և մեքենաներ, վոր գլուղացին ձեռք բերել չի կարող զբանց թանգության պատճառով, և բացի զբանից, 2-3 կով ունեցողին բոլորովին հաշիվ չէ, ևնա չի յել կարող ձեռք բերել: Բայց չիթե ցանկանան միասին վերամշակել իրենց կաթը, գլուղացիք այդ հրնարավորությունը կունենան:

Դրա համար պետք է միայն ձեռք քաշել կաթնամթերքների արտագրության նահապետական անհատական ձևվերից և կողմակերպել կաթնարտելիներ և բանալ կատարելագործված գործարաններ և ընկերական ձևով պատրաստել կաթնամթերքներ:

Վոչ մի կովատեր գուրս չպիտի մնա արտելից, չեթե ուղղում է, վոր իր պանիրն ու չուղը լավ վորակի լինեն և լավ գնով վաճառվեն:

Այն գյուղերում, վորտեղ կաթնարտել չկա, պետք է անսպաժման կազմակերպել ալգպիսին, իսկ չեղածներին պետք է անդամագրվեն բոլորը:

Մեր գյուղացիութան զեռ չնչին մասն է կաթնարտելներին անդամագրված, այնինչ մեր նպատակը պետք է լինի, վոր մեր չերկրի ամբողջ կաթը վերամշակվի արտելների գործարաններում:

Ներկայումս կաթնարտելների թիվը հասնում է 85-ի: Ըստ գամպոռների դրանք բաժանվում են այսպես.

ԳԱՎԱՌՆԵՐ	Արտելների քանակը	Անդամների թիվը
Փամբակ-Լոռի	37	3820
Լենինական	16	584
Նոր-Բալագետ	5	405
Զանգեզուր	4	545
Դիլիջան	14	717
Յերևան	4	114
Եջմիածին	1	35
Դարալագյազ	2	?
Մեղրի	—	—

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ամեն ուր կշռեցեք ձեր կովի կաթը՝ վորոշելու համար, թե ձեր տված կերից (կամ արոտից) վորքան կաթ է տալիս կովը: Հետո սկսեցեք տալ կովին որական սի չերկու կիլո բուսալ, թեփ կամ գարու ալյուր (կամ բոլորից ել խառը) քչից սկսեցեք և աստիճանաբար ավելացրեք, մինչև վոր կաթի ավելանալը դադարի, հետո հաշվեցեք, թե

ա. քանի կիլո կաթ ե ավելացրել ձեր կովը ուժեղ կերի շնորհիվ.

բ. լուրաքանչյուր մի կիլո կերից քանի՞ կիլո կաթ ե արտադրել ձեր կովը.

գ. վճրքան ե մի կիլո կաթի ինքնարժեքն ուժեղ կեր տալուց առաջ ե ուժեղ կեր տալու ժամանակ:

(Նույն փորձը կարող եք կատարել մատակի, վոչխարի ե այծի նկատմամբ):

2. Ի՞նչ գնով են ծախվում գյուղացու պատրաստած ե գործարանում արտադրված չուլն ու պանիրը:

3. Ձեր կովի վրա կատարած կերակրման փորձի հետևանքների հիման վրա հաշվեցեք, թե միջին թվով քանի կիլո կովի կաթ ե արտադրվում ամբողջ Հայաստանում ներկայումս ե վո՞րքան կարող ե արտադրվել ուժեղ կերեր տալու ժամանակ. կազմեցեք այդ առթիվ դիագրամա:

4. Յեթե ձեր գյուղում կաթնարտել չկա, ժողով արեք ե ղեկուցեցեք կաթնարտել կազմակերպելու անհրաժեշտություն մասին:

5. ԳՈՄԱՂԻ ՍՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Բացի աշխատանքից, մսից ե կաթից կենդանիներն արտադրում են ե գոմաղը, այսինքն թրիք (տավարի ե գոմեշի), փթիլ (ձիու, եշի) ե կտիտ (վոչխարի, այծի) կերի կրճտեղների ե ցամաքի հետ խառը:

Գոմաղը հանդիսանում ե մեր դաշտաբույսի բերքատվո թյան հիմքը, բացի դրանից նա լավացնում ե հողի ֆիզիկական հատկությունները:

Վորտեղ գոմաղըն ոգտագործվում ե իբրեւ պարարտանյութ, այնտեղ չերկրագործության մշակույթները կրկնակի բերք են տալիս, այնպես վոր գոմաղի ե վոչ մի կիլո չպիտի իզուր տեղը կորչի, այլ ամբողջովին պետք ե գնա դաշտը պարարտացնելու համար:

Գոմաղբը շատ թանգարժեք նյութ է և ցույց է տալիս, Վոր առանց անաճապահության չի կարող լինել բերքատու յերկրագործություն: Մանավանդ թանգարժեք է այն կենդանիների աղբը, Վորոնք բացի խոտից ու դարմանից ստանում են և ուժեղ կերեր (քուսպ, թեփ, ալյուր և այլն):

Սակայն մեզ մոտ գոմաղբի հետ վարվում են միանգամայն գիշատիչ, անշացիոնալ ձևով, Վորի շնորհիվ տաքեցտարի պակասում է մեր դաշտերի ուժը և մեր բույսերի բերքը:

Շատ քիչ տեղերում են գյուղացիք գոմաղբով կանոնավոր պարարտացնում իրենց հողերը, մեծ մասամբ գոմաղբից պարարտում են աթար և այլում են կամ ածում են ձորերը, Վոչնչացնում, յերբեմն ել ուղղակի վառում են աղբակույտերը:

Պետք է ուրիշ կերպ լուծել վառելանյութի խնդիրը և, ինչ գնով էլ լինի, փրկել գոմաղբն ալրվելուց կամ աննպատակ փչանալուց:

Սրանում շահագրգռված է Վոչ միայն գոմաղբի տերը, այլ ամբողջ հասարակութունը և պետութունը:

Ճիշտ է, գոյութուն ունեն և արհեստական պարարտանյութեր, բայց դրանցից և Վոչ մեկը չի կարող փոխարինել գոմաղբին և նրա տեղը բռնել: Բացի այդ ներքինք անհամեմատ ավելի թանգ արժեն, քան գոմաղբը:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վո՞ր կենդանու աղբն է ավելի ուժեղ իբրև պարարտանյութ:

2. Վո՞ր կենդանին է ավելի շատ պարարտանյութ տալիս:

3. Կատարեցեք ձեր դաշտում պարարտացման փորձ և հաշվեցեք պարարտացրած և Վոչ պարարտացրած հողերից ստացած բերքի տարբերութունը:

4. Ինչո՞ւ ուժեղ կերեւոյ ուսող կե՞ր դանու աղբն ա-
վելի ուժեղ ե, քան միայն դարման և խոտ ուսողինը:

5. Ի՞նչպէս են վարվում ձեր գլուղում գոմաղբի և
մոխրի հետ:

7. Ի՞նչ միջոցների յե դիմել գլուղխորհուրդը ձեր
գլուղի գոմաղբը փշանալուց փրկելու և պարարտացման
կարիքների համար գործադրելու նպատակով:

6. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏՎԱԾ ԱՅԼ ՈԳՈՒՏՆԵՐԸ.

Այստեղ առաջին տեղն և բռնում կաշին կամ մաշկը
և մորթին, վորը վերաժակում են և զանազան իրեր պատ-
րաստում: Այնուհետև մազը, չեղջուրները, վոսկրները և
ալ անպիտը մասերը, — բոլորն էլ ոգտագործվում են: Վոս-
կրներն ալրում են, ալուր են դարձնում և գործ են ա-
ծում իրեր և պարարտանյութ կամ կերի հետ աալիս են
կենդանիներին:

Սրանից չերևում ե, վոր կենդանիներից վոչ մի բան
և վոչ մի մասնիկ առանց ոգտագործման չի կորչում:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ի՞նչպէս են ոգտագործում ձեզ մոտ տավարի և
գոմեշի, ձիու և եշի կաշիները և վոշխարի ու ալծի մոր-
թիները:

2. Ի՞նչպէս են ոգտագործում նույն կաշիներն ու մոր-
թիները գործաքաններում և ի՞նչ են պատրաստում նը-
րանցից:

3. Ի՞նչ բանի համար են ոգտագործում աղիքները,
ո՞վ ե ձեր գլուղում աղիքներ գնում:

4. Ո՞վքեր են կաշիների և մորթիների գնողները ձեր
գլուղում և ի՞նչ գնով են առնում:

5. Վոսկրների, չեղջուրների ու սմբակների գը-
նորդներ գալիս են ձեր գլուղը, թե վոչ. չեթե վոչ, ապա
ի՞նչ եք անում ալդ մնացորդների հետ և ի՞նչ ե հարկա-
վոր անել:

V. ԻՆՉՊԵՍ Ե ՏԱՐՎՈՒՄ ԲՈՒԺՈՒՄԸ ՄԵԶԱՆՈՒՄ.

I. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀՍՍՈՒՆԱՑՈՒՄԸ.

Տարբերում են յերկու տեսակ հասունություն՝ սեռական և տնտեսական: Սեռական հասունությունն այն է, յերբ կենդանիներն արդեն բեղմնավորելու և բեղմնավորվելու ընդունակ են դառել: Տնտեսական հասունությունը՝ յերբ կենդանին ընդունակ է ադապտացիայի և տնտեսվանք, բարիքներ արտադրել կամ աշխատել առանց վնաս հասցնելու իր առողջությանն ու կյանքի տևողությանը:

Կենդանու սեռական հասունությունը բավականին շուտ է առաջ գալիս: Դա կախված է կենդանու ցեղից և կերի պայմաններից: Վաղահաս ցեղերը, և ընդհանրապես լավ կերակրված կենդանիները շուտ են հասնում:

Երեքի և արունների միասին ապրելը նպաստում է վաղաժամ սեռական հասունությանը, անկախ նրանից, թե կենդանիները լավ են կերակրված, թե վատ:

Վաղաժամ զուգավորումը շատ վատ է ազդում վորձ կենդանու աճման և զարգացման վրա, իսկ եզի վրա նույնպես վատ է ազդում դրա հետևանքով տեղի ունեցող վաղաժամ ծննդաբերությունը:

Մեր վորձ կենդանիները շատ վաղաժամ, դեռ 2 տարեկան չեղած, սկսում են ծածկել, դրա հետևանքով էլ հյուժվում են և ժամանակից շուտ անպետքանում իրեն արտադրող. դրա զլխավոր պատճառը եզերի հետ միշտ միասին լինելն է:

Վատ կերի պայմաններում այդ հանգամանքը կործանիչ ազդեցություն ունի վորձի վրա, վորը սովորաբար 1-2 տարուց աճնպես է անպետքանում, վոր հարկադրված են լինում կրտել:

Այդպիսի ցույց շատ վատ սերունդ է տալիս, շատ անգամ բեղմնավորելու ընդունակությունը պակասում է, և եզերը մնում են ստերիլ:

Վաղաժամ ծնած կովերը մանր են մնում, և նրանց կաթնատվութիւնը չի զարգանում:

Այս բոլորից հետո պարզ է՝ չպիտի թույլ տալ, վոր մոտավորապես 6—7 ամսական հասակից հետո եզերն ու արունները միասին ապրեն ու արածեն, վորպեսզի վաղաժամ չզուգավորվեն: Անհրաժեշտ է զրանց առանձին-առանձին պահել և առաջին զուգավորումը կատարել կենդանու լրիվ հասունութիւն ժամանակ:

Փորձը ցույց է տվել, վոր առաջին անգամ կարելի չէ թույլ տալ զուգավորվելու մոտավորապես՝

լերինջներին $2\frac{1}{2}$ տարեկան հասակում

վոշխարին 2 » »

մատակին 5 » »

խոյլին 12 ամսական »

զամբիկին (եզ ձիուն) 4 տարեկան հասակում:

Վորձերին կարելի չէ թույլ տալ մոտավորապես նույն հասակում:

Քանի վոր մեզ մոտ այս խնդրի վրա ուշադրութիւն չեն դարձնում, մեր կենդանիներն ստացվում են թուլակազմ և անարդյունավետ:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վո՞ր հասակում են առաջին անգամ ցուլով գալիս յերինջները, և վո՞ր հասակում են առաջին անգամ ծածկում յերիտասարդ ցուլիկները:

2. Ի՞նչ միջոցներ պետք է կիրառել, վորպեսզի հեշտ լինի վորձերն եզերից առանձին պահել և առաջին զուգավորման ժամանակը կանոնավորել:

3. Վո՞ր կովն է ավելի շատ կաթ տալիս, վաղաժամ ցուլով յեկմծը, թե՞ ժամանակին. (որինակներ բերեք ձեր տեսածից և լսածից):

2. ԱՐՏԱԴՐՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ.

Այն վորձ կենդանիները, վորոնց պահում են եզերին բեղմնավորելու համար, կոչվում են արտադրողներ (ցուլ, գոմշացուլ, հովառակ, խոյ, վարազ, նոխազ):

Սրանց նշանակութունը կենդանիները բազմացնելու և ազնվացնելու խնդրում հսկայական է, ալդ պատճառով անհրաժեշտ է այնպես ոգտագործել սրանց, վոր յերկար տարիներ ոգտակար լինեն, չմաշվեն, և բեղմնավորելու ընդունակութիւնը շուտ չկորցնեն: Դրա համար, բացի լավ կերակրելուց և խնամելուց, անհրաժեշտ է և կանոնավորել նրա ոգտագործումը:

Դրա համար հարկավոր է իմանալ հետևյալը.

1. Ամեն ցուլով գալու ժամանակ բավական է, վոր կովը միայն մեկ անգամ ծածկվի, վորպեսզի բեղմնավորվի:

2. Վորքան շատ գուգավորվի ցուլը մեկ որվա ընթացքում, այնքան ավելի շուտ նա կփչանա, կանպետքանա:

3. Յերբ ցուլը մեկ որում չափից շատ կովեր է ծածկում, ծածկվածներից շատերը չեն բեղմնավորվում և մնում են ստերջ:

4. Նախրի մեջ թողած ցուլը, թեև շատ կովերի և շատ անգամ է ծածկում, բայց փաստորեն գրանցից միայն 30—40-ն են բեղմնավորվում տարվա ընթացքում:

5. Տանը պահած ժամանակ, յերբ կուրերին բերում են ցուլի մոտ և մեկ անգամից ավել թույլ չեն տալիս յենելու, ցուլը կարողանում է բեղմնավորել տարեկան 60—80 կով: Յեւ ալս դեպքում նա կարողանում է ավելի յերկար ապրել ու յերկար ել աշխատել:

Սրանից յեղրակացում ենք, վոր մեր գլուղացիք ցուլ պահել չգիտեն. վորովհետև նրանք վերևում գրածին բոլորովին հակառակն են անում: Ուղղակի նահառակում են ցուլին:

Նույն վիճակում են գտնվում նաև մյուս տեսակի բոլոր արտադրողները: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել արտադրողների ոգտագործման կանոնավորման վրա:

Պետք է ցուլերին պահել տանը և կովերին բերել նըրանց մոտ: Նույնը հարկավոր է անել և խոզերի ու ձիերի նկատմամբ: Վորջան խոշոր և այս ձևի նշանակութւոյունը, ցուլը են տալիս հետեւյալ թվերը. —

Վորջան եղ և բեղմնավորում ցուլը տանը կապած ժամանակ յեղ նախում:

	Տ Ա Ն Ը	ՆԱԽՐՈՒՄ
Կ ո Վ	60—80	30—40
Մերուն	20—30	10—20
Զածրիկ	50—60	25—30
Վոշխար	80—100	30—35
Ա ի ծ	80—100	40—50

Պարզ է, վոր մի մարդուն հաշիվ չի և դժվար էլ է իր միջանի կովերի համար առանձին ցուլ ունենալ, ուստի անհրաժեշտ է կազմակերպել հատուկ ընկերութւոյուններ, վորոնք ձեռք են բերում ցուլեր կամ այլ արտադրողներ, վորոնց առաջին հերթին իրենք են ոգտագործում, ապա ոգտվելու հնալ ավորութւոյուն են տալիս նաև հասարակութւանը:

Կառավարութւոյունն էլ է կազմակերպում բեղմնակայաններ, վորտեղ պահւում և տարբեր տեսակի և ցեղերի արտադրողներ տեղադրն անասնապահական կարիքները համար:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Կան ձեր գլուզում կամ շրջանում բեղմնակայաններ, և ինչ տեսակի կենդանիներ են պահում այնտեղ (ձի, տավար, խոզ և այլն): Ձեր կենդանիներն ոգտվում են այդ բեղմնակայաններից, թե վոչ:

2. Ստացել եք այդ բեղմնակայանների արտադրողներից սերունդ, և ինչո՞վ ե նա տարբերվում ձեր գլուզի կենդանիներից:

3. Գո՞ն եք այն շրջիկ հովատակներից, վոր պահում ե Հոգժո՞ղկոմատը տեղական ձիերը լավացնելու համար:

4. Կազմեցեք ցույ պահելու և ոգտագործելու մասին պատգամներ, գետեղեցեք պատի թերթում և միաժամանակ թուղթիկների ձևով տարածեցեք շրջակա գլուզերը:

5. Նախաձեռնեցեք ձեր գլուզում ցուլապահ ընկերութուն կազմակերպելու գործին:

6. Վո՞ր հասակումն են անպետքանում ձեր ցուլերը զոչերը, վարաղները և այլն: Ինչո՞ւ չեն շուտ կրտում ձեր ցուլերը:

3. ԻՆՁՈ՞Ւ ՅԵՆ ՍՏԵՐՋ ՄՆՈՒՄ ՄԵՐ ԿՈՎԵՐԸ.

Նախորդ լերկու գլուխներում արդեն մանրամասն բացատրված ե, թե ինչպես ցուլերին վատ ոգտագործելու հետևանքով կովերը մնում են ստերջ (ղըսըր): Դրանք ամենահիմնական պատճառներն են, բայց դրանցից բացի կան և ուրիշ պատճառներ, վորոնցից առաջինը ցուլերի պակասությունն եմեր լերկրում: Գլուզացիք ցուլերին թողնում են մինչև 2 տարեկան հասակը և ապա կրտում: մանր տավարատիրոջ համար ձեռնտու չի ցուլ պահելը և դրա հետևանքով ամբողջ Հայաստանում 1926 թվին կար ընդամենը 410 գլ. 2 տարեկանից բարձր ցուլ. մնացածը 2 տարեկանից թերահաս, անպետք մոզիսներ ելին: Յեթե կովերի քանակը հաշվում ենք 200,000, ապա չուրաքանչյուր

2 տարեկանից բարձր ցուլին ընկնում է ուղիղ 500 կով: Պարզ է, թե ինչու ստերջների թիվը շատ է:

Վարդանան մեր կովերին բեղմնավորողներն ըստ մեծի մասին մոզիններ են, այդ պատճառով էլ ստացվում է անպետք, թույլ սերունդ:

Ինչպես տեսանք, անհատը ցուլ պահող չէ: Այդ նրա ուժերից վեր է, ուրեմն ինչ պետք է անել:

Պետք է հասարակական, ընկերական բեղմնակալաններ բանալ, ցուլապահ ընկերութուններ կազմակերպել. միակ լիքը դա չէ: Բացի դրանից պետութիւնը պետք է ցուլաբուժարաններ հիմնի և ցուլեր մատակարարի ազգաբնակչութեանը. միաժամանակ պետք է նպաստի կովեկտիվ ցուլաբուժարաններ հիմնելու գործին:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Հաշվեցե՛ք՝ քանի՞ ցուլ կա ձեր գյուղում 2 տարեկանից բարձր, և մի ցուլին քանի՞ կով և չերինջ է ընկնում: (Կազմեցե՛ք դիագրամա):

2. Հաշվեցե՛ք՝ քանի՞ ցուլ կա ձեր գյուղում 2 տարեկանից փոքր և ալդպիսի մի ցուլին քանի՞ կով և չերինջ է ընկնում: (Կազմեցե՛ք դիագրամա և զեկուցե՛ք ցուլի խնդրի մասին գյուղական ընդհանուր ժողովում):

3. Ձեր շրջ-գյուղատնտեսի և Հայգյուղկոտլի աջակցութեամբ կազմակերպեցե՛ք ձեր գյուղում ցուլապահ ընկերութիւն:

4. ԾՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՆՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ.

Մեր կենդանիները սովորաբար ծնում են գարնան սկզբներին: Արդյո՞ք նպատակահարմար է այդ:

Փորձը ցույց է տվել, վոր աշնանը ծնված հորթերն ավելի լավ են զարգանում, քան գարնան ծնվածները: Մինչև գարնան արոտն ընկնելը նրանք արդեն մեծացած

են լինուժ և արուար լաժ են ոգտագործում, լաժ զարդա-
նում են ու աճում:

Աշնան ծնած կովերն ավելի շատ կաթ են տալիս ամ-
բողջ տարին, յեթե, իհարկե, աշնանն ու ձմեռը լաժ են
կերակրվում:

Ուրեմն ցանկալի յե, վոր կովերը ծնեն աշնանը կամ
ձմռան սկզբին:

Քանի դեռ մեզ մոտ ցուլերը նախրի հետ են ապ-
րում, յերբեք չի հաջողվի կովերի ծնելու ժամանակը կա-
նոնավորել՝ աշնան տեղափոխել: Բացի դրանից ձմեռվա և
գարնան սկզբի կերը լավը պետք ե լինի, վոր կովերը գար-
նան ամիսներին ցուլով զան՝ աշնան վերջին ծնելու
համար:

Ուրեմն հարկավոր ե անասունների կերը լավացնել,
ցուլերին առանձին պահել և տնային ձևով զուգավորել
կովերին:

Զպիտի վախենալ, յերբ բեր չեկող կովը հովանում ե
առանց բեղմնավորվելու, վորովհետև ամենաուշը մեկ ամ-
սից հետո կովը նորից ե ցուլով դալու, յեթե կերը տեղն ե:

Վոչխարի և խոզի ծնելու ժամանակը մեզ մոտ կա-
նոնավորվում ե, բայց տավարինը՝ վոչ. հարկավոր ե նաև
տավարի ծնելու ժամանակը կանոնավորել:

Ծնելու ժամանակը կանոնավորելու համար պետք ե
իմանալ կենդանու հղության տևողությունը.

Կովի	հղությունը	տևում ե միջին թվով	285 օր
Մատակի	»	»	300 »
Վոչխարինը	»	»	154 »
Ա չ ծ ի	»	»	154 »
Մերունի	»	»	120 »
Զամբիկի	»	»	340 »
Ե չ ի	»	»	350 »

Յերբ ցուլապահ ընկերություններ կունենանք, և ցու-
լերը նախրից զատ կպահվեն, ալև կլավանա մեր կովերի

կերը, այն ժամանակ շատ հեշտ կլինի գլուխ բերել ծնելու ժամանակի կանոնավորումը:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ձեր գլուղի կովերը գլխավորապես լերը են ծնունում: Յուցակազրեցեք ձեր գլուղի այս տարվա ծնած կովերին, նշանակելով ծնելու ամիսը: Ծնած կովերին դասավորեցեք ըստ ամիսների և կազմեցեք դիտարամմա թերացարձակ թվերով և թե տոկոսներով (վորքան ծնունդ է ընկնում յուրաքանչյուր ամսին և վոր տոկոսն է կազմում յուրաքանչյուր ամսի ծնունդը ընդհանուր թվի):

2. Բերքի տոնին դուրս բերեք ցուցահանդես այս տարվա ծնված բոլոր հորթերին, բաժանեցեք ըստ ամիսների և ցուցահանդեսում իրար մոտ կանգնեցրեք բոլոր խմբերին և համեմատեցեք խմբերն իրար հետ՝ հայտնաբերելու համար, թե վոր ամսի ծնված խումբն է ավելի լավը (խոշոր և մսով):

3. Ինչո՞վ է բացատրվում, վոր աշնան ծնած կովերն ընդհանրապես ավելի շատ կաթ են տալիս տարվա մեջ:

4. Յե՞րբ եք խառնում և ջուկում եզերից զոչերն ու վարազները և ինչո՞ւ:

5. Ի՞նչպես կարող եք կազմակերպել տավարի ծնելու կանոնավորումը ձեր գլուղում. (այդ հարցը քննեցեք ձեր խմբակում և աղա գլուղխորհրդի գլուղսեկցիայում):

5. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Մեր անասնապահության ամենամեծ պակասություններից մեկն էլ այն է, վոր կենդանիների մեջ կանոնավոր դիտակցված ընտրություն չի կատարվում: Ի՞նչ տեսակ կենդանի ասես, մեր գլուղացին պահում է, և այդ պատճառով մեր կենդանիների մեծ մասն անպետք է:

Պետք ե չեալ գցել ախպիտի կենդանիներ, վորոնք լավ հորից և լավ մորից են առաջացել: Յեթե մալրը կաթնատու յե, հայրն ել կաթնատա մորից ե, ապա ալղալիտի կենդանիների զաւակներին հարկավոր ե պահել: Լավը լալից յեա գցելով ժամանակին կստացվեն ընտրված, կաթնատա կենդանիներ, վորոնք ազնվացեղ ոտար ցեղերից չեալ չեն մնալ:

Հարկավոր ե ալղ ձեռով ընտրել թե եգերին և թե վորձերին: Ալղ աշխատաւոր պետք ե կատարի վոչ թե միայն ցանկացող անհատը, ալլ ամբողջ գլուղը, վորովհետեւ անհատական գծով շատ դժվար ե մանր և միջակ տընտեսութլուաների համար կանոնավոր ընտրութլուն կատարել: Հարկավոր ե, վորպեսզի բոլորի կենդանիների վրա լինի ընդհանուրի հսկողութլունն ու աչքը, վորպեսզի ալս կամ ալն տնտեսութլան լավ կենդանին աչքաթող չարվի, ալլ հալոնաբերվի և ողտադործվի ամբողջի կողմից: Լավ ցուլացուներն իսկույն հարկավոր ե ջոկել, ընկերութլան սեփականութլուն դարձնել և հասուկ խնամք տանել նրա նկատմամբ:

Դրա համար անհրաժեշտ ե կազմակերպել անասաբուլձների ընկերութլւաներ, վորպեսզի դրանք ընկերական ձեռով իրար ոգնելով և աջակցելով կարողանան կենդանիների ընտրւթլունն ամուր հիմքերի վրա դնել և հանրացնել:

Անասաբուլձնւորի ընկերութլուն հիմնելու համար հարկավոր ե գիմել ձեր չրջանի կամ զաւառի գլուղատընտեսին կամ Հայգլուղկոտպին:

Յեթե կենդանիների կանոնավոր ընտրութլանը մասաւական, կազմակերպված բնութթ տրվի, ալն ժամանակ վոչ մի կարիք չի լինի արտասահմանից ոտար, անփորձ ցեղեր բերել:

Շատ շրջաններում արդեն բերել են այդ ցեղերից և զրանց համը տեսել: Բերողները հիասթափվել են այդ կենդանիներից, վորովհետև զրանք մեր պայմաններին չեն կարողանում հարմարվել, սատկում են հիվանդութուններից, հյուժվում են և կաթը պակասացնում:

Պետք է տեղական տավարն ընտրութիւն լավ կերի միջոցով ազնվացնել: Այս ձևն ավելի ձեռնտու չե գլուղացի մասսային և պետութիւնը:

Միայն հարկավոր է անասնաբուժական ընկերութիւններով պատել մեր լեռերը. զրանում է մեր փրկութիւնը:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ձեր գլուղում ունի տավարը, վոչխարը, ձին կամ խոզն է աչքի ընկնում, ինչո՞վ, և ի՞նչն է զրա պատճառը: (Նկարագրեցեք, թե ինչպես են գոյացել սրա կամ նրա նշանավոր նախիրները ձեր գլուղում կամ շրջանում):

2. Ի՞նչ ձևով է ձեզ մոտ ընտրութիւն կատարվում: (Մանրամասնորեն նկարագրել գոյութիւն ունեցող ձեզ բոլոր տեսակ կենդանիների նկատմամբ, առանձնապես վոչխարի և խոզի):

3. Յեղել են ձեզ մոտ ոտար ցեղերի կովեր և ի՞նչ պիտի արդիւնք են տվել նրանք:

4. Ո՞ւմ կովերն են համարվում ամենակաթնառատ ձեր գլուղում, և ի՞նչն է զրանց կաթնառատ լինելու պատճառը:

5. Վճր տնտեսութեան մեջ կան կովերի ընտանիքներ, սկսած տատից մինչև թոռներն ու ծոռները:

Նման են սրանք իրար, և ի՞նչ հատկութիւններով (նուէնը վոչխարների և խոզերի նկատմամբ):

6. Վճիռ կոչն եւ ամենակաթնառատը ձեր գլուզում եւ ինչպէս են նրա սերունդները:

7. Ձեր գլուզում ունի ցուրկից են առաջանում լավ կաթնառատ կովեր:

8. Կազմակերպեցե՞ք հորթ արուծական խմբակ՝ խնամքը եւ ընտրութիւնը կողքեկտրութեան տանելու նպատակով:

9. Ձեր շրջանի անասնաբուծարանից ինչպիսի ցուրկեր են մատակարարում ազգայնակութեանը:

VI. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԻՔԱՆԻ ՏԱՐԱԾՎԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶԱՆՈՒՄ.

1. Տավարի ժանգախը (չումա).

Ամեն տարի այս հիվանդութիւնը տասնյակ հազարներով կենդանիներ եւ կոտորում, ահագին վնաս հասցնելով թե տերերին եւ թե պետութեանը: 1925—26 թվին Հայաստանում ժանտախտով հիվանդացել եւ 19,292 գլուխ, վորից սատկել եւ 10 687 գլուխ: 1926—27 թ. հիվանդացել եւ 25,756 գլուխ, սատկել եւ 14,919 գլուխ տավար: Սա հսկայական կորուստ եւ մեր տնտեսութեան համար:

Մի ժամանակ այս հիվանդութիւնը գոլութիւն ունէր թե Ռուսաստանում եւ թե Արեւմտյան Յեւրոպայում: Այժմ այնտեղ այլեւս չկա: Այնտեղ կովել են եւ վոչնչացրել այդ հիվանդութիւնը:

Ամենայնով միջոցը բոլոր կենդանիներին պատվաստելն է: Մեր Հողօգտագործար կառուցել եւ հաստել ինստիտուտ, վորը պատրաստում եւ ժանտախտի շիճուկ՝ պատվաստելու համար:

1925—26 թ. պատվաստվել եւ մեր չերկում 212,423 գլ. տավ.
1926—27 թ. » » » 192,361 » »

Մեկ անգամ պատվաստածը յերկար ժամանակ չի հիվանդանում: Ծանրած կենդանիները յերբեմն հորթատում են: Պատվաստվածներից սատկում են 2 տոկոսից վոչ ավել:

Ազնվացեղ կենդանիներն այս հիվանդությունից կոտորվում են 100 տոկոսով, իսկ պատվաստելու դեպքում մոտ 70 տոկոսով:

Բացի բոլորին պատվաստելուց՝ հարկավոր ե և հետեւյալ միջոցները ձեռք առնել. —

1. Հայտնել վարչական մարմիններին ժանտախտի դեպքի մասին:

2. Վոչնչացնել սատկած կենդանիների մարմիններն ու կաշին, թաղել ու կրով ծածկել կամ այրել:

Սատկած կենդանիների դիմաց պետութչունը հատուցում ե տալիս:

Ժանտախտից ազատվելու համար բավական չի, վոր մենք միայն այդ միջոցներին դիմենք, այլ անհրաժեշտ ե, վոր նույն միջոցներին դիմեն և մեր հարևան պետութչունները՝ Ադրբեջանը, Վրաստանը և նույնիսկ Պարսկաստանն ու Տաճկաստանը:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Քանի՞ տավար ե հիվանդացել, սատկել ու հորթատել ձեր գյուղում այս տարի և քանի՞ ուրբուռ ապահովագրական կամ հատուցում եք ստացել պետութչունից:

2. 1925—26 և 1926—27 թ. հիվանդացած կենդանիներից քանի՞ տոկոսն ե սատկել և քանիսն առողջացել. (հաշվեցեք):

3. Վո՞րքան փասս ե տեսել մեր Հանրապետութչունը նույն տարիներին ժանտախտից.

4. Վճիռ շրջանից և վարակվում մեծ մասամբ ձեր տավարը:

5. Վճիռքան կենդանի յե ստակել կամ հորթատել սրակելուց:

2. Դարաղ.

Այս հիվանդութիւնը հաճախ համաճարակի բնույթ է կրում: Կենդանին վոչ կարողանում է ուտել, վոչ ման գալ, հյուծվում և և տիրոջը հսկայական ֆնաս հասցնում:

Հորթերը հաճախ վարակվում են կաթի միջոցով, վարակվել կարող են և մարդիկ, յեթե հում կաթ խմեն: Դարաղով վարակված կենդանու կաթից պանիր և յուղ պատրաստել չի կարելի:

Հիվանդ կենդանիներին պետք է տոանձնացնել և անմիջապէս զիմել անասնաբուժին ու ճշտությամբ կատարել նրա հրահանգները:

Այս հիվանդութիւնից ավելի մեծ չափով տուժում են տղնվացեղ կենդանիները:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ի՞նչպիսի տարիներին ավելի շատ է լինում դարաղը:

2. Վճիռ կենդանիներն են ավելի տառապում դրանից:

3. Հաշվեցեք տնտեսական աշն ֆնասը, վոր հասցնում է դարաղը տերերին և պետությանը:

3. Պիրոպլազմոս (սենղ).

Շատ անգամ կենդանիները ջերմում են ու զոդացնում, և նույնիսկ մեզը ընդունում է կարմիր, արնախառն գուն:


Սա տաք շրջանների հիվանդութիւնն է, բայց կարող է պատահել և սարերում: Այս հիվանդութիւնն առաջացնողը կենդանիների տիգն է (տես նկ. 6) փոքր կաշիլ վ կենդանու մարմնին, արշուներ ծծելու միջոցին վարակում է նրան:



Նկ. 6. Տիգերի տեսակներից մեկը, փոքր միջոցով կենդանին վարակում է պիրոպլազմոս հիվանդութեամբ:

Հիվանդութիւնը շատ վտանգավոր է, առանձնապես ազնվացեղ կենդանիներն են մեծ չափով կոտորվում սրանից: Անհրաժեշտ է ամեն սր կենդանիներին մաքրել տիգերից, իսկ սրանց վնշնշացնել:

4. Կենդանիների Բուր¹.



Նկ. 7. Բուր տիգը (աշտով անտեսանելի չէ):

Մեր կենդանիների կաշվի ամենատարածված և վտանգավոր հիվանդութիւնն է և շատ վարակիչ: Այդ հիվանդութիւնն առաջացնում են շատ մանր, աչքով անտեսանելի տիգեր (տես նկ. 7), փոքոնք մտնում են կաշվի տակ և քայքայում են կաշին:

Անհրաժեշտ է հիվանդներին առանձնացնել և բժշկել անառնաբուժի խորհրդով:

Դա շատ վարակիչ է և մարդու համար:

¹ Կարգա՝ Բողդանով. «Ընտանի կենդանիների բուր»:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՂ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Խնչպես են արտահայտվում քոսի նշանները տավարի, ձիու և այծի ու վոչխարի վրա:
2. Խնչ տնտեսական վնաս և հասցնում քոսը:
3. Խնչով են բժշկում ձեղ մոտ քոսը:

5. Քյափանակը¹.

Պա մի վորդ և (տես նկ. 8), վոր ապրում է վոչխարի լյարդի մեջ և քաղբալում է լյարդն ու կենդանու մահվան պատճառ դառնում:

Այդ հիվանդությունով վարակվում են նաև տավարը, այծերը և նույնիսկ մարդը:

Յերիտասարդ և ծանրած կենդանիներն ավելի դժվարությամբ են դիմանում, քան հասակավորները: Քաղցածներն ավելի շուտ են սատկում, քան լավ կերակրվող կենդանիները: Այդ և պատճառը, վոր քյափանակով հիվանդ



Նկ. 8. Քյափանակի վորդը:

վոչխարները մեծ մասամբ սատկում են ձմռան վերջերին ու գարնան սկզբներին:

Քյափանակ վորդը գտնվում է ճաճոտ, ճլկոտ աեղերում: Արածելու կամ ջուր խմելու ժամանակ ընկնում են վոչխարի բերանը կերի կամ ջրի հետ, այնտեղից անցնում են լյարդը:

Քյափանակի դեմ կռվելու միջոցը ճահիճների և ճլկոտ հողերի չորացնելն է: Բայի գրանից սկսեք և խուսափել այսպիսի աեղերում վոչխար ու այծ արած սցնելուց:

¹ Կարգա՝ Պոպով. «Վոչխարի քյափանակ հիվանդությունը»:


ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Վերցրեք սատկած վոշխարի լլարդը և գտեք քլա-
փանակ վորդը, վորը գտնվում է լլարդի անցքերում:

2. Կազմեցեք ձեր գլուղի ճլկոտ տեղերը չորացնե-
լու նախագլիժը և ներկայացրեք գլուղխորհրդին քննու-
թյան առնելու համար:

6. Փորուռուցի.

Վորոճող կենդանիները և մեծ մասամբ տավարի փորը
շատ անգամ ուռչում են, վորի հետևանքով չերբեմն թա-
փանք պատուվում են, և կենդանին սատ-
կում:



Նկ. 9. Զոնդ խողովա-
կը, վոր ուռած կենդանու
կերակրափողն են մացը-
նում՝ գազերը փորից
դուրս հանելու համար:


Փորուռուցքը տեղի չե ունենում
այն ժամանակ, չերը կենդանիները փշա-
ցած, նեխված կեր են ուտում, կամ
թաց կանաչ խոտ, առավոտները, չերը
դեռ շաղը վրան են, իսկ ամենից հաճախ
փորուռուցքը պատահում են, չերը կեն-
դանիները կանաչ ու թաց լոնջա, չե-
րեքնուկ, վիկ են ուտում, այսինքն
չերը թիթեռնածաղիկ խոտեր են արա-
ծում: Մեծ մասամբ փորուռուցքը պա-
տահում են, չերը կենդանին անոթի չե
լինում:

Կենդանուն փրկելու համար կամ
փորը ծակում են արովար կոշվող
գործիքով, կամ բերանն են մացնում
զոնդ խողովակը (նկ. 9), վոր թա-
փանից գոյացած գազերը դուրս գան (տես նկ. 10 և 11)

Վերջերս խորհուրդ են տալիս նալթ խմացնել, կիսով չափ ջրի հետ խառնած:



Նկ. 10. Խնչակա պետր և կանգնած լինի կովը, վոր զագերը հեշտությամբ դուրս գան:



Նկ. 11. Յեթե տյապես լինի կանգնած կովը, զագերը դուրս չեն գալ: Սլաքով ցույց և տրված աշխտեղը, վորտեղ պետք և ծակել տրեկարով, յեթե խողովակ չկա:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Վո՞ր կենդանիների փորն և ավելի հաճախ ուռչում:
2. Փորուռուցքից սատկելու քանի՞ դեպք և յեղել ձեր դյուրում ընթացիկ տարում:
3. Յերը, ի՞նչ արոտից հետո չի ուռչում կենդանու փորը՝ փորի վո՞ր կողմն և ուռչում և ի՞նչո՞ւ:
4. Գլուղական ի՞նչ միջոցների յեք դիմում կենդանուն տրաքելուց փրկելու համար: Այդ միջոցներից վո՞րն և համարվում ավելի իրականը:

7. Հորքերի սպիտակ փորում.

Սա չափազանց վարակիչ հիվանդութունն է, և հիվանդացած հորթը հազվագյուտ դեպքերում և առույժանում. մեծ մասամբ սատկում է:

Հորթը վարակվում է ծնվելուն պես, իսկ հիվանդու-

թխան նշանները լերեւում են 2—3 օրից հետո: Լուծն ապիտակ դուչն սւնի և շատ վատ հոտ: Վարակումը տեղի չե ունենում պորտի միջոցով, անպես վոր նոր ծնված հորթի պորտը պետք և խիււչն լվանալ վորեւե անտահանիչ միջոցով (սոււրճա, կարբոլյան հեղուկ,) կամ չոզ քսել, վորպեսզի հիվանդության առաջն առնված լինի:

ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Խնչպիսի նշաններով և արտահայտվում սպիտակ փորլուծը:
2. Ձեր խժրակի հորթերից քանիսն են այս տարի ստակել ս զիտակ փորլուծից:


VII. ԻՆՉՊԵՍ ՎՈՐՈՇԵԼ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԻ ՔԱՇԸ.

Այս զրբում շատ անգամ առաջագրութունների մեջ խոսվում և կենդանիների քաշը վորոշելու մասին: Դա անհրաժեշտ աշխատանք և: Բայց ամեն տեղ չեն ճարվում մեծ կշեռքներ, վորպեսզի կարելի լինի կշռել կենդանիներին: Այդ պատճառով ել կարեւոր ենք համարում ստորե նկարագրել քաշը վորոշելու հեշտ միջոցները:

1. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՔԱՇԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԿՇԵՌՔՈՎ.

Յուրաքանչյուր զյուղում կճարվի մեկ տասնորդական կշեռք. զրա համար շատ դործնական և ալի կշեռք ՚ երի ոգտագործման հետ ծանոթանալ:

Վերցնում են ուղիղ, հարթ տեղ և հարթաչափով ուղղում: Դրա մեջ վորում են մի փոս



Նկ. 12. Ժապավեն կենդանուն չափելու համար, մանավանդ կենդանի քաշը վորոշելու մամանակ:

աշնպես, վոր տասնորդական կշեռքն ամբողջովին մանի մեջը, և մակերեսը հավասարվի գետնի մակերեսին:


Կենդանուն բերում են և կանգնեցնում առաջին վորտներով կշեռքի վրա և կշռում, հետո կանգնեցնում են լետի վորտներով և նույնպես կշռում: Առաջին կշիռը զուամարում են չերկրորդի հետ և ստանում են կենդանու ամբողջ քաշը:

Այս ձևը հեղինակը փորձել է II Խորհրդային տնտեսություն, մեջ և ստացել է շատ լավ հետևանքներ:

Բոլոր պայմանները ճշտությունը կատարելիս զրեթե իսկական քաշից չի տարբերվում:

2. ԿԵՆԴԱՆԻ ՔԱՇԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՏՐՈՒԽԱՆՈՎՍԿՈՒ ՅԵՂԱՆԱԿՈՎ

Կենդանուն կանգնեցնում եք ուղիղ և հարթ աեղ, Չա-



փում եք ժապավենով (նկ. 12) (վերջոկներով) մեջրի վրայով պոշարմատից մինչև մնկավի դագաթը (նկ. 13), հետո չափում եք կրծքի փաթը, թիակները և չափից:

Ստացած թվերը բազմապատկում եք և ինչ ստացվի, բա-

նկ. 13. ինչպես են չափում կենդանուն՝ քաշը փորոշիլու համար: Մլաքները ցույց են տալիս, թե փորոշիլից փորոշիլ պետք է չափել:

ժանում եք 40-ի վրա և ստանում կենդանի քաշը՝ արտահայտված փթերով: Նույն արտադրչայր ֆնտերով յեթե բաժանեք 2,44-ի վրա, կստանաք կենդանի քաշը կիլոգրամներով:

Այս ձևը թեև ավելի հեշտ է, բայց անքան էլ ճիշտ
հետևանքներ չի տալիս:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Կատարեցեք այս չերկու ձևի նկատմամբ մի քանի
փորձեր և ստուգեցեք չերկուսի պիտանիությունը:



Ց Ա Ն Կ.

Եջ

Առաջաբան 3—6

I. ԻՆՉԻ՝ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԻՆՉ ՏԵՍԱԿ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ
ՊԱՀՈՒՄ ՄԵՐ ԳՅՈՒՂԱՅԻՔ. 7—9

II. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳՈՅՈՒ-
ԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՄԵԶԱՆՈՒՄ. 9—29

1. Կերի պայմանները 10

2. Տեղագրական պայմանները 13

3. Զրի պայմանները 17

4. Խնամքի պայմանները 19

5. Կիսաքոչվորական և նստակյաց անասնապա-
հուծյուն 22

6. Արոտատեղերի քանակն և ոգտագործուժը 27

III. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲԱՆԱԿԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. 30—42

ա. Բացարձակ քանակը 30

բ. Անասնապահուծյան խտուծյունը 32

գ. Նախրի կազմը 37

IV. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՏՎԱԾ ՈԳՈՒՏՆԵՐԸ. 43—70

1. Աշխատանքի ասպարիզում 43

ա. Բանող կենդանին և շարժիչ մեքենան. 43

բ. Բանող կենդանիներն ու նրանց պիտա-
նիությունը 44

գ. Բանող կենդանիների պահվածքի և կյանքի
պայմանները 47

դ. Լծելու սարքը	49
2. Մսի արտադրութիւնը	52
3. Բրդի արտադրութիւնը	56
4. Կաթի և կաթնամթերքների արտադրութիւնը	58
ա. Կաթն ու կաթնամթերքները	58
բ. Կաթի բանական ավելացնելու և կաթնամթերքների վորակը բարձրացնելու միջոցները	60
5. Գոմաղբի արտադրութիւնը	68
6. Կենդանիների տված ալլ ոգուտները	70


V. ԻՆՉՊԵՍ Ե ՏԱՐՎՈՒՄ ԲՈՒԾՈՒՄԸ ՄԵՋԱՆՈՒՄ. 71—81

1. Կենդանիների հասունացումը	71
2. Արտադրող կենդանիների ոգտազործումը	73
3. Ինչո՞ւ յեն ստերջ մնում մեր կովերը	75
4. Ծնելու ժամանակի կանոնավորումը	76
5. Ընտրութիւն կանոնավորումը և անասնաբուծական ընկերութիւնները	78

VI. ԳՅՈՒՂ. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԻՔԱՆԻ ՏԱՐԱԾՎԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՋԱՆՈՒՄ . . . 81—88

1. Տափարի ժանտախտը (չուժա)	81
2. Դաբաղ	83
3. Պիրոպլազմոս (տենդ)	83
4. Կենդանիների բոսը	84
5. Քլափանակը	85
6. Փորուռուցք	86
7. Հորթի սպիտակ փորլուծ	87


VII. ԻՆՉՊԵՍ ՎՈՐՈՇԵԼ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԻ ԲԱՇԸ. 88—90



ՎՐԻՊԱԿՆԵՐ ՅԵՎ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ.

Գիրքը կարդալուց առաջ խնդրում ենք ուղղել նեհեմիսլը.

Եջ	Տող	Տպագրված է	Պետք է լինի
8	17	Ներքևից	որինակ
8	12	»	զամեշ
9	4	վերևից	ձեզ մոտ
12	5	»	զոճինների հետ
17	14	Ներքևից	մեծ
17	15	»	մեծ
42	14	»	ցլեկները
49	1	վերևից	եշին
56	3	»	փոքրիկ
60	3	»	մեզ մոտ պատրաստում են
60	4	»	զործարաններում
61	16	»	կերն իզուր տեղը
63	15	Ներքևից	հորչում է
63	12	»	նապատակով
			ունի կենդանին:
			զեպքում
			ունի կենդանին, և
			վորը գտնվում է
			կերի մեջ:
66	1	վերևից	տալ
71	1	»	բուժումը
80	6	»	ընտրութիւնն և լավ



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003694

A ^{II} 23338

ԳԻՆՆ Ե 50 ԿՈՊ.

284.